Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18346

Ցուցակ - գրքերի

1903

ՋԱՆ-ԳԻՒԼՈՒՄ

600 ՏՈՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ԺՈՂՈՎԵՑ

ՀԱՅԿ Ե. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

(Արտատպած «Բանասէր» հանդիսից)

891.99
S-37

ՊԱՐԻՍ

1903

ՋԱՆ-ԳԻԼՈՒՄԻ ՄԱՍԻՆ

891.99
Ֆ-37

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Լոյս ընծայելով մեր «Ջան-Գիւլում»-ների մի փոքրիկ մասը, մենք աչքի առաջ ենք ունեցել նախ այն, որ բաւական թուով Ջան-Գիւլումներ կան անտիպ մնացած եւ ըստ կարելոյն աշխատել ենք գոնէ մի փոքրիկ մասը տպել (317 տուն)։ Երկրորդ, որ ցարդ մի այսպիսի ժողովածու գոյութիւն չ'ունի, սակայն կարիքը մեծ է։ Վրաբնակ Սրբոնախ քաղաքում 1901 թ. Ջան-Գիւլումին 426 նշան էր դրուած եւ ըստ տիպուած էին մի եւ նոյն տները կրկնել, թէպէտ մեր այս անտիպ տետրով էին երգում, որ ընդամենը 375 տուն էր բովանդակում։ Երրորդ՝ 'ի միասին ժողովելով այս բոլորը մենք ուզեցել ենք ծանօթացնել հայ բանասէրներին այս գոհարների հետ, որոնք հայ բանաւոր բանահիւսութեան ամենահարուստ ճիւղերից մէկն են կազմում։

Շնորհակալութիւն ենք յայտնում այն բոլոր պարոններին, որոնք չը զլացան մեր նամակներին պատասխանելու եւ կամ բերանացի թելադրելու։

Այս գրքոյկը կազմելիս աչքի առաջ ենք ունեցել եւ օգտուել ենք հետեւեալ գրքերից. ա) Ռամկական մրմունջներ — Ա. Բրուտեանի. բ) Քնար Հայկական — Մ. Մխանսարեանի. գ) Ազգագրական Հանդէս (բոլոր տարիները) — Ե. Լալայեանի. դ) Գրոց եւ Բրոց, Համով-Հոտով եւ այլն — Գ. եպ. Սրուանձտեանի եւ այլն։

—

Որքան եւ աշխատեցանք՝ չ'կարողացանք գտնել «Ջան-Գիւլում»-ի ծագման պատմութիւնը։ Հայոց ժողովրդական բանահիւսութիւնը բաւական հարուստ է եւ մի ամբողջ ուսումնասիրութեան առարկայ կարող է կազմել։ Դեռ եւս Հայկազանց հարստութեան ժամանակներից մենք վկայութիւններ ունենք, որ կային երգիչներ՝ գուսաններ, յիշատակւում են գործիքներ, որոնց վրայ նուագում էին կամ ածում, ինչպէս փող, վին, գավին, քնար, ջնար, սաւիղ, ծնծղայ, թմբուկ, բամբիռն կամ փամբիռն։ Գողթն, այժմեան Ագուլիսի գաւառը հարուստ էր երգիչ-նը-ւագողներով, որոնք նոյն իսկ նախարարների եւ թագաւորների մօտ ազատ մուտք ունէին. նոքա խնջոյքների եւ ուրախութեան զարդն էին։ Գողթն գինաւէտ գաւառներից մէկը ճանաչուած լինելով, բնական է որ ժողովրդի մէջ պէտք է ծագեցնէր երգը, որ առհասարակ ուրախութեան առարկաներից մէկն է։ Մեր պատմութեան հայր Մովսէս Խորենացին իւր պատմութեան մէջ շարունակ յիշատակում է այս երգ-

գիշերին եւ նոցա բերանից առնելով երգեր է մէջ բերել։ Հին ժամանակ եւ դեռ այս օր էլ մեր ժողովրդի մէջ ամեն մի երեւելի անցք իւր տեղ է գտնում ժողովրդական երգերում, այժմ չկան 'ի հարկէ Գողթան երգիչները, սակայն կան աշուղներ, որոնց հայրենիքներից մէկն է Ալէքսանդրապոլը։ Կան գեղջուկ երգիչներ, որոնք աշուղ չեն, այլ հէնց անպատրաստից այնպիսի ճարտար բանաստեղծութիւն կարող են ասել, որ ամենաղօրեղ եւ ճարտար բանաստեղծի գրիչն անգամ կը խոնարհուի նրա առաջ։ Ժողովուրդը երգում է ե՛ւ վիշտ, ե՛ւ սէր, ե՛ւ ուրախութիւն, ե՛ւ մահ եւ այդ բոլորը նա կարողանում է նկարագրել, հասկանալի դարձնել եւ ոգէտ ռամիկը այնքան ճարտար է, որ նոյն իսկ վանկաչափութիւնն ու լեզուական կապակցութեան թելը չէ կորցնում։ Համոզուելու համար ահա ձեզ մի բանաստեղծութիւն 600 տնից բաղկացած, որ հարիւրաւոր հեղինակներ ունի եւ սիրոյ մի ամբողջ շտեմարան է։ Հին երգերի հոգին աւելի ուրիշ է իսկ նորն աւելի շատ «սէր» այն էլ «գիւղական սէր», որ մեր սիրուց շատ հեռու է կանգնած, նա անբիծ է եւ արդար։ Մեր գեղջուկը կարծես թէ մեզ հետ յարմարուել է այդ մի բանում, սակայն նա աւելի լաւ է հասկացել, քան թէ մենք, որ աւելի շատ բոպէական բաւականութեանց ետեւից ենք ընկնում եւ այդտեղ որոնում սէրը, քանթէ կեանքի զոյգ գտնելու։ Մեր օրիորդը «չինովնիկ»-ին է որոնում, «էպոլէտ»-ի փայլը շլացնում է նրան, հարստութիւնը ծնողներին զաւակավաճառ է դարձնում, իսկ գեղջկուհին ուրախ է եթէ իւր եարը ռանչպար է, սիրացու, տէրտէրացու, դուքեանդար, խաչնարած եւ այլն։ Նա քաշւում է քեօխվացուից (գիւղի տանուտէր), նա ատում է «չինովնիկ» դասակարգին։

Մեր երիտասարդը փողով աղջիկ է որոնում, սէրը երկրորդական բան է, իսկ գեղջուկը բաւականանում է, եթէ իւր սիրած աղջիկը կարմրաթուշ է։

Որպէս զի հին եւ նոր բանաւոր բանահիւսութեան մէջ եղած տարբերութիւնը նկատելի լինի, մենք առաջ կը բերենք մի քանի հին երգերը։

Մ. Խորենացին առասպել-ներից առնելով մէջ է բերել Երուանդ Ա. Սակաւակեաց կոչուած Հայկազունու քեռայր Վարդգէսի ամուսնութիւնը (Գիրք Բ, գլ. կե)։

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն զԹասաղ գեռով,
Եկեալ նստեալ զՇրէզ 1) բլրով,
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զԹասաղ գեռով,
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի...։

---

1) Բլուր Շրէշ անունով, որ գտնւում է Ա. Էջմիածնից ոչ հեռու, այժմ էլ երբ քանդում են այլ եւ այլ [illegible] են գտնում։

2503
ZUUR Арм.ССР
94754

17798 29

Նոյնպիսի աղբիւրներից եւ առել Խորենացին, լսել է երգելն ու բամբռան վրայ նուագելը Հայոց Վահագն թագաւորի մասին ասածը։ Այս Վահագնին աստուածացրին եւ Հերքուլէսի քաջութիւններից մի քանիսը սրան էին վերագրում, այդպէս եւ Ցարդգողի ճանապարհի պատմութիւնը։ Ահա մեր հին երգիչներն ինչպէս են նկարագրում նորա ծնունդը (Խոր. Գիրք Ա. գլ. ղա)։

Երկնէր երկին եւ երկիր,
Երկնէր եւ ծիրանի ծով,
Երկն 'ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վազէր 1)։
Նա հուր հեր ունէր
(Ապա թէ) բոց ունէր մորուս
Եւ աչկունքն էին արեգակունք։

Նշանաւոր Արտաշէսի, որ հայ Աղէքսանդր Մակեդոնացի է, ամուսնանալու մասին էլ գեղեցիկ երգեր կան շարադրուած, օր. Ալանաց օրիորդի փախցնելու մասին ասում էր (Խոր. Գիրք Բ. գլ. ծ)։

Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գեան,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին։

Հարսանիքի մասին էլ ասում էր (նոյն տեղ)։

Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ 'ի հարսնութեան Սաթինկանն։

Արտաշէսի թաղումը շատ հետաքրքիր կերպով է կատարուել։ Աշխարհակալ թագաւորը չը տեսնուած պատուով է թաղուել եւ ինչպէս Խորենացին ասում է, ցաւն այնքան մեծ էր, որ շատերը գերեզմանի մօտ անձնասպանութիւն գործեցին։ Այս բոլորը անհաճոյ էր Արտաւազդին, որ նրանից յետոյ թագաւորեց եւ իբր թէ սա խօսել է իւր մեռած հօր հետ, որ նրան անիծել է (Խոր. գիրք Բ, գլ. կա)։

Մինչ դու գնացեր եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց ո՞րպէս թագաւորեմ։

Մեռած Արտաշէսն այսպէս է անիծում, որ ըստ աւանդութեան կատարուել է։

---

1) Այս տողը 1695 թ. Ամստերդամում տպուած Խորենացու մէջ այսպէս է գրուած. «Եւ 'ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ»։

Եթէ դու յորս հեծցիս
Ցազատն ի վեր 'ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,
Տարցին յազատն 'ի վեր 'ի Մասիս,
Անդ կացցես եւ զլոյս մի տեսցես։

Սրտաւազդի համար էլ, որ անպիտանի մէկն էր, ասւում էր թէ Ֆնուելիս նրան գողացել եւ փոխանակ դեւ են դրել։

Վիշապազունք գողացան զմանուկն Սրտաւազդ,
Եւ դեւ փոխանակ եդին։

Մի յիշատակութիւն էլ գեղջկական երգերից կայ Գրիգոր Մագիստրոսից մեզ հասած։

Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց։
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք։

Մովսէս Կաղանկատուացու Սղուանից պատմութեան մէջ էլ կայ մի այդպիսի հատուած, որը երեւի նոյն ձեւով ծագած պէտք է լինի ինչպէս վերինները։ Ցամենայն դէպս այս բոլոր նմուշներից մենք այն եզրակացութեան ենք գալիս, որ հնումն էլ ինչպէս այժմ մենք ունեցել ենք բանաւոր բանահիւսութիւն, որ բաւական հարուստ է եղած, սակայն մեզ շատ քիչ է հասել այդ բոլորից։ Այս բոլորը 'ի հարկէ մեր մէջ հարեւան ազգերից է անցել, աւելի շատ յոյներից, որոնց մէջ կարծիք կայ, որ Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը եւ միւս նման գրուածքները առաջ բերանէ բերան են անցել երգելով եւ նուագելով եւ յետոյ գրի առնուել։

Հին երգերն երգուել են ժամանակակից լեզուով, իսկ հետզհետէ այդ լեզուն կերպարանափոխուել է, փոխուել է լեզուի ձեւը, նոր բառեր են մտել հարեւան ազգերից եւ ստացուել է այժմեան ռամկական լեզուն։ Ջան-Գիւլումները այս վերջին լեզուով են։ Այնպիսի տներ կան որ խօսքերի եւ նախադասութեան տեղափոխութեան են ենթարկուել, սակայն ընդհանուր միտքը նոյն է մնացել։

«Ջան-Գիւլում»-ի ծագումն շատ հին պէտք է լինի եւ գուցէ հեթանոսութիւնից մնացած։ Սրանից չորս տարի առաջ մի ասորի մեր Ջան-Գիւլումի նման մի երգ էր երգում, եւ նա պատմեց մեզ, որ դա Կայէնի եւ Աբելի մասին է ասած։ Ժողովրդի վառ երեւակայութիւնն ահա թէ ինչպիսի աւանդութիւն է ստեղծել. Կայէնը սպանել է Աբելին, մի աղջկայ պատճառով։ Ցաւում ենք որ մեր բոլոր ջանքերն 'ի զուր անցան եւ չը կարողացանք գտնել այն ասորուն աւելի լուսաբանելու այդ աւանդութիւնը։ Այնու ամենայնիւ մենք այն կարծիքի ենք, որ դա հեթանոսական սովորութիւններից մէկն էր, որ կատարւում էր մի

որ եւ է հեթանոսական տօնին, որ մեր Համբարձման տօնի օրերին էր լինում եւ գործողութեան տեղը որ եւ է բագինի կամ կուռքի շուրջ եղած բակն էր։

Շատ սովորութիւններ են անցել հեթանոսութիւնից քրիստոնէական աշխարհ եւ շատերից մէկն էլ այդ պէտք է լինի։

Համբարձման օրը մի տեսակ սրբազան նշանակութիւն ունի։ Այդ օրը խորհրդաւոր օր է 1)։

Ջան-Գիւլումը կատարւում է եկեղեցու, վանքի եւ կամ մատրան բակումը, յաճախ գերեզմանատան եւ կամ ստուերազարդ անտառում։ Հանդէսը սկսւում է հետեւեալ կերպով։ Համբարձման նախընթաց օրը օրիորդներն ու երիտասարդները վայրի ծաղիկներ են հաւաքում, դաշտում եւ կամ թէ եկեղեցու բակում։ Դորա հետ խառնում են եւ փոքրիկ քարեր ու մասնակցողներից հաւաքած «նշան»-ներ եւ լցնում են մի նախշուն ամանի մէջ (քիլայ)։ Կէս գիշերին մէկն անխօս աղբիւր է գնում ջուր բերելու, որ լցնում են այդ ամանի մէջ։ Ամանը մինչեւ միւս առաւօտ պահում են եկեղեցու եւ կամ այնպիսի մի տան, որտեղ անցած Համբարձումից ոչ մի դժբաղդութիւն տեղի չէ ունեցած։ Միւս օր պատարագից առաջ կամ յետոյ եւ կամ ճաշից յետոյ հաւաքւում են մասնակցողները, մի փոքրիկ աղջկան ծածկում են քօղով եւ այդ «քօղով հարս»-ի հետ գնում որոշեալ տեղը եւ տանում ամանը ճանապարհին երգելով ժողովրդական կամ ազգային երգեր։ Հանդիսավայրում տղայք եւ աղջկերք խումբ կազմած երգում են մի մի տուն իսկ «քօղով հարսն» էլ ամեն մի տուն երգելուց յետոյ մի նշան է հանում, որ տալիս են տիրոջ։ Այսպէս շարունակւում է մինչեւ վերջանալը։

Սրանից յետոյ սկսում են եայլի կապել, պարերգեր երգել, եւ նոյն ձեւով վերադառնում են տուն։

—

Այս գրքոյկը կազմելիս կարեւոր համարեցինք ծանօթութիւններ տալ, որ ցանկացողը կը գտնէ գրքոյկիս վերջը։ Միեւնոյն ժամանակ աշխատեցինք բացատրել անհասկանալի բառերը, սակայն անյաջող, որովհետեւ շատ բառեր ոչ մի միտք չեն արտայայտում, այլ ուղղակի յանգեր կազմելու համար գրած են, շատ բառերն էլ անտեղի են եւ բացատրութիւնը մտքին չէ համապատասխանում։ Ուստի խնդրում ենք ներողամիտ լինել։ Սորա հետ միասին խնդրում ենք ուղարկել մեզ անտիպ Ջան-Գիւլումներ եւ մենք չենք զլանալ միւս անգամ 600-ի տեղ 6000 տուն տպելու։ Մեզ մօտ՝ մօտ 150 տուն դեռ մնում է, որ մեզնից անկախ պատճառներով չենք կարողանում տպել։

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

---

1) Այդ օրուայ սովորութիւնների մասին մենք գրել ենք «Համբարձման տօնը» վերնագրով մի յօդուած (տես Բանասէր, Ապրիլ 1902 թ. Փարիզ)։

ՋԱՆ-ԳԻՐԼՈՒՄ

1 Ծառիս տակը մանիշակ,
Իմ եարը քանց քեզ չիշակ 1),
Ութը թումանից անց կենամ
Քեզ կանեմ եարիս մշակ։

2 Ծաղիկ ունիմ նարընջի,
Ա՛յ աղայ, վե՛ր արի, փնջի,
Իմ մէր քեզ աղջիկ չիտալ
Քանի՞ ման գաս եարընջի 2)։

3 Եարըս եարալու արեց 3),
Հաւը մեր տանը թառեց,
Հոզեմ ես նրա գլուխը
Երեք-չորս տարի խաբեց։

4 Լուսնեակը նորէ, նորէ,
Եարիս երեսը կըլոր է,
Կըլոր սուրաթին 4) մեռնեմ,
Հագինը կարմիր շոր է։

5 Վարդեր ունիմ բոլ ու բոլ 5),
Եարիս երեսն ա կըլոր,
Որ ասում եմ հուժկու ա,
Ինքըն ա Ասլանի տոլ։

6 Ա՛յ աղայ հուր ես, մուր ես,
Ես ծառաւ եմ դու ջուր ես,
Ծուղարլան թառլան 6) շոր ես,
Համբարձում գիշերն ուր ես։

7 Դու նստել ես գերանին,
Ղառզու 7) շուին բերանին,
Օսկէ զայթան 8) եմ գործել
Կարեմ ջիբիդ բերանին։

8 Սպիտակ ձին նալն ի՞նչ կանի,
Սիրունը խալն ի՞նչ կանի,
Քեզի սիրող իգիթը 9)
Աշխարհի մալն 10) ի՞նչ կանի։

9 Ջաղացիս յետի կուռը
Կը ցնծայ միջի գիւլը 11)
Վա՞յ, ի՛մ սիրած բլբուլը
Քաշեցին խանի դուռը։

10 Շատ մի անի վար ու ցած
Ես քեզ վաղուց եմ տեսած,
Մենք իրարու նման ենք
Մի խնձոր երկու կիսած։

11 Ախչի, ախչի, ա՛յ ախչի, [չի 13),
Գիւլ ես լման 12) մեր բախ-
Էլ մի ընկնի դարբէդար 14)
Աբժան արա՛ մի պաչի։

12 Եարը պիտէր չուխաւոր,
Ալ ձի նստելը սաւոր,
Ալ աղլուխն էլ որ կապէ
Ինձի լինի թագաւոր։

13 Քուչէքը լիք լիք,
Ախչի՛, առայ քու միտքը,
Ձեռով կանեմ արի տե՛ս,
Վալա՛հ, մատնի կը տամ քեզ։

14 Կայնել ես կանչում էլ չես,
Բոյիցդ 15) ամաչում էլ չես,
Էկայ կշտովդ անցկացայ
Տէր ես ճանաչում էլ չես։

---

1) Դերասաս։ — 2) Անգործ։ — 3) Վիրաւորեց։ — 4) Պատկեր, դէմք։ — 5) Շատ։ — 6) Գեղեցիկ։ — 7) Փորձանք։ — 8) Հատ թել։ — 9) Կրտրիճ։ — 10) Ապրանք, ինչք։ — 11) Վարդ։ — 12) Նման։ — 13) Պարտէզ։ — 14) Դէսուդէն։ — 15) Հատակ։

15 Սարերը բարակ սէզ ա,
Բաղել ես կակուղ բէզա 1),
Հազըրվի՛ 2), արի՛, գնա՛նք
Բանի չի մթնել թէզ ա 3)։

16 Իմ եարը տիրացու է,
Ցասուկ տէրտէրացու է,
Մազերը որ վեր ունի
Մի գիւղի քեօխվացու է 4)։

17 Մէ եար ունի՛մ եարա՛ 5),
Նարը չի, զահրումար ա,
Նըրա ձեռքին տանջուելով
Թամամ զամիչ 6) ես դառայ։

18 Ամպեր մի քիչ հով արէ՛ք,
Անձրեւ թափէք՝ ծով արէ՛ք,
Գէջ մարդու էլ ու գիւնը 7)
Սեւ հողի տակով արէ՛ք։

19 Բաղած արար հաց տարայ,
Նարիս տեսայ ես դառայ,
Էս ինչ բէբաղդ 8) եար եմ ես
Ինձոր տուաւ ես չառայ։

20 Թօփը 9) խըփեց վերի դին,
Սէլաւ 10) էկաւ մեր կալին,
Վա՛յ կըտամ, վա՛յ կասեմ,
Շուտով բերէ՛ք իմ եարին։

21 Ժամի պատը տաշած է,
Գեղի վըրէն քաշած է,
Ճամբիդ պաշարի համար
Զաղ հաւերը խաշած է։

22 Մեր տուն, ձեր տունը մօտիկ,
Կապել ես խալէ գօտիկ,
Էս վանքի ըխտաւորից
Մենակ դու ես խօրօտիկ 11)։

23 Բիւլբիւլ արի մեր բաղը,
Ասա՛ իմ եարի խաղը,
Խաղիդ միջով բարեւս
Հասցրու իմ եարիս թաղը։

24 Ամպը քըցել ա հովը,
Առուովն անցայ էն քովը,
Տեսնում ես քիզ պատել ա
Էս անիրաւ սեւ ծովը։

25 Աչքերդ դեղ ես դրել,
Ինձ գըժի տեղ ես դրել,
Անըզգամի խօսքովը
Իմ վրայ մեղ ես դրել։

26 Փեանքիւլիդ 12) կալին մեռնեմ,
Էրեսիդ խալին մեռնեմ,
Լսել եմ կարդացել ես
Սաղմոսիդ կողին մեռնեմ։

27 Պուճուր աղջիկ սեւաւոր,
Խալխի դռները սաւոր,
Գընա՛, մէրդ կանչում ա,
Թո՛ղ ինձ չ'անէ մեղաւոր։

28 Ես մի անղալաթ 13) դուշ եմ
Թայերիս 14) մէջ նմուշ եմ,
Ի՛նչ հարս, աղջի՛կ որ տեսնես
Ես բոլորիդ անուշ եմ։

29 Կողբայ քամին բոլորուաւ,
Նարիս բեխերն ոլորաւ,
Նարիս գըրեցին սալդատ
Սիրաս, փորս մոլորուաւ։

30 Սիրածս քամար ունի,
Աշխարհի չափ մալ ունի,
Ինձ էլ որ իր կին առնէ
Էլ բանի կարօտ չունի։

31 Վարդ էք տալիս ի՛նչ անեմ,
Մարդարիտը ի՛նչ կ'անեմ,
Նարիս բերէ՛ք, որ տեսնեմ,
Ալ 15) աղլուխը ի՛նչ կանեմ։

32 Քա՛ր է սիրաս, քա՛ր ա,
Սիրաս, ջըրից վարար ա,
Գեղի աղջի խօրօտը
Իմ սիրած սիրուն եար ա։

---

1) Զարդարած. — 2) Պատրաստուիր. — 3) Վաղ է. — 4) Տանուտէր. — 5) Վէրք. — 6) Եղէգն. — 7) Ազգն ու օրը. — 8) Անբաղդ. — 9) Թընդանօթ. — 10) Հեղեղ. — 11) Գեղեցիկ. — 12) Գլխի ճակատին թո-

33 Համբուրել եմ մեր ս. խաչ,
Առել եմ մենծ սրբի աջ,
Ս. Կարապետ զօրաւոր
Եկել ընկել եմ առաջ։

34 Զորացաւ կանանչ տերեւս,
Խաւարաւ օրը, արեւս,
Ես շատ անբաղդ աղջիկ եմ,
Որ չ'հասաւ քեզ բարեւս։

35 Զաղացս պատիկ-պատիկ,
Աչքերդ նման հատիկ,
Ամեն քեզի տեսնելիս
Համ Համբարձումն համ Զատիկ։

36 Անձրեւն եկաւ գեօղ 1) արեց,
Ատուած տարին բօղ արեց,
Ասէք տեսնեմ, ո՞ր քեօռը
Եարիս խաթրըջան 2) արեց։

37 Ռանչպար ա 3) եարս հէր չ'ունի,
Եթում ա 4) եարս մէր չ'ունի,
Հէչ 5) մի կարծէք թէ եարս
Բոլորովին տէր չ'ունի։

38 Ծիրան եմ ծառի ծէրին,
Կերեսամ հետ թերերին,
Էկան, քաղեցին, տարա՛ն
Ծախեցին ախմախներին,

39 Ձեռներդ ծափ ես տալիս,
Ֆեանքիւլդ թափ ես տալիս,
Էսօր էքուց ես քցել՝
Ամեն օր խափ ես տալիս։

40 Տիրացու ես զիլ 6) ձէնով,
Եար ես բլբուլի ձէնով,
Տաղ ու սազմոս կը կանչես
Թամամ տէրտէրի ձէնով։

41 Սրեւ ծագեց մեր վըրէն,
Փայ առնեն ամենքն իրեն,
Սրեւ ջա՛ն, մէ խաբար տուր
Իմ սիրա՞ծ անուշ եարէն։

42 Վըրադ եօրղան ես քաշել,
Սի՛րտս, հոգիս ես մաշել,
Ատուած անէ լաւանաս
Մեր տան պզտի հարս դառնաս։

43 Իմ եարին հասէք հաւար 7),
Ջէբը լիք է, սովդաքար 8),
Ֆանի ես աչք եմ բացել
Ծնուել ես ընձի համար։

44 Աշտարակ ձուն ա գալիս,
Մեր ժամը փուլ ա գալիս,
Մէ՛ բէյմուրազ 9) եար ունիմ,
Հարբում ա տուն ա գալիս։

45 Արազն թաց արաւ արաս 10),
Իր ափն ա լցրել աւազ,
Զուր 11) մեր պատկի վախտը
Կը մընայ դուզ 12) չորս կարաս։

46 Անձրեւ խփեց սարիցը,
Ֆար ընկաւ մեծ դարիցը 13),
Գիր չը ստացայ որ ասեմ
Իմ սիրելի եարիցը։

47 Նշան տուի զատկին քեզ,
Իմ պատն 14) է առել երես,
Համբարձումին դըրի նաշ 15)
Ատուած խըզճալ չը գիտես։

48 Մեր տունն եկել ես փեսայ,
Սրտով սիրածիս տեսայ,
Էլ չեմ ուզե ուրիշին
Իմ սիրած եարն էս ա։

զած մազը · — 13) անվնաս · — 14) Ֆուռակ · — 15) Կարմիր՝ մուք։

1) Լճակ · — 2) Խօսք չը կատարել, կամքը չը կատարել · — 3) Երկրագործ · — 4) Որբ · — 5) Բոլորովին · — 6) Բարակ բարձր ձայն. 7) Օգնութիւն · —8) Վաճառական · —9) Անպէտք · — 10) Ափ · — 11) Մինչեւ · — 12) Ճիշտ · — 13) Զառ'իվայր · — 14) Համբոյր · — 15) Դագաղ։

49 Աչքերս թաց ես արել,
Եօրղանդ բաց ես արել,
Քուրիկ նայէ իմ եարին
Վարդ ու մեխակ ա դառել։

50 Զիւն ա էկել հալել ա,
Լցուել գետը սառել ա,
Էտ էլ օղլու 1) գէշ խօսքը
Ինձ մոմի պէս վառել ա։

51 Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի, ալ վալայ ա,
Եար բռնելը լաւ բան ա,
Բաց թողալը բայայ ա 2)։

52 Ա՛յ եա՛ր, չո՛ւտ արի,
Քարկուռ 3) չոլերով 4) արի,
Քար չոլերով ման կը գամ
Թէ կորցնեմ սիրած եարի։

53 Ախչի ինաղ 5) մի անի,
Վէ՛ր կաց, կայնի դու բանի,
Զեռքդ տար սրտիս մէջը
Դարդերս 6) մէկ մէկ հանի։

54 Քեաբաբս աղ եմ արել,
Զիգեարս դաղ եմ արել,
Դօստ 7) ու դուշմանիս 8) միջին
Լացս ծիծաղ եմ արել։

55 Բաղ եմ քցել նոր 'ի նոր
Հասցրրել եմ մի խնձոր,
Եարիս տեսնելու համար
Քանի՞ ընկնեմ սար ու ձոր։

56 Ա՛յ Սրաղ ջուրդ վարար,
Եարաբ 9) եարիս չը տեսա՞ր.
Ես չը հասայ մուրազիս 10)
Եարաբ կարօտս առա՞ր։

57 Մանի մանի մի բերան,
Սէյը տանի ջուխտ գերան,
Գէչը 11) սիրունի ծոցին,
Հա՞յ, վա՞խ ու հարուր բերան։

58 Ա՛յ սըղայ մեր գեղըցի,
Բերանըդ եկեղեցի,
Կարմիր քարը տաշեցի
Բօյըդ վըրէն քաշեցի։

59 Ալամ 12) աշխարհ ման էկայ,
Գեղիս միւս գեղը ընկայ.
Ո՛ւմ որ հարցրի, բան չըսին,
Ես իմ եարին չը գըտայ։

60 Ժամը տուին ժամ կասեն,
Տէրտէրները տաղ կասեն.
Եարը, աղբէրը գինովցած
Նստած դզում 13) հաղ 14) կասեն։

61 Սափորը ուսիս գըրի,
Էրթամ աղբուրը ջըրի,
Ի՞նչ փուշ գայ իմ առջեւը
Դուշմանիս սրտով խըրի՛։

62 Կապել ես քիրման գօտիկ,
Մարդ չես թողնում քեզ մօտիկ,
Համ տեսքով ես համ հոտով
Քան ըղձաղիկ խօրօտիկ։

63 Զուն գընում թաւէն խաշում,
Ելնում էրթիկը աշում,
Տեսնում եարը գալիս ա.
Զոքում չաքմէքը 15) քաշում։

64 Լուսնակը պահ ա մտել,
Անուշ եարիս չեմ գտել,
Աչքս արտասուք լցուած
Ես տեղաշոր չեմ մտել,

---

1) Օտար մարդ — 2) Վտանգաւոր է, խաթարալայ է. — 3) Քարքարոտ. — 4) Դաշտ. — 5) Ցամաքութիւն. — 6) Վիշտ, ցաւ, հոգս. — 7) Բարեկամ, ընկեր. — 8) Թշնամի. — 9) Սրդեօք. — 10) Իղձ, ցանկութիւն. — 11) Տգեղ, վատ. — 12) Սմբողջ. — 13) Դաշտում. — 14) Երգ. — 15) Կօշիկ։

65 Կայնել ես ձեր դրան բաշ 1),
Սիրտս էլաւ հալումաշ,
Արեւելքից-արեւմուտք
Խալխ ա 2) եկել քու թամաշ 3)։

66 Էս ա գալիս եմ քեզ մօտ,
Քեզի վաղուց եմ կարօտ.
Վա՛յ թաղեմ մօրըդ գլուխը
Սիրտըս արել ա դարդոտ։

67 Հագել եմ ալ եմ եղել,
Սրտէս հիլալ եմ 4) եղել,
Հէրու 5) իմ բլբուլ լեզուս
Էս տարի լալ եմ 6) դառել։

68 Տուն եմ չինել գետափին
Բաղ եմ քցել առաջին,
Նարիս հետ քշփշում եմ
Նստած ծառի շուաքին։

69 Վարդապետի սեւ վեղար,
Ես քո եար եմ եկ ինձ տար,
Ղըզըլբաշը 7) կայներ ա,
Շուտ արա՛ ինձ ձեռքէն ա՛ռ։

70 Ա՛յ նազանի, հազանի,
Ունքդ քառվի 8) լմանի,
Թէ՛ սիրում ես ինձ քեզ ա՛ռ,
Վարդավառին՝ էս տարի։

71 Մէ եար ունիմ վա՛ըդ ա,
Վարդը չի գլխիս դա՛ըդ ա,
Փահլըվանի կշտին էլ
Ամենից ուժով մարդ ա։

72 Բեխդ քաշէ, կըլորի,
Կարմիր թուշդ բըլորի,
Ով քեզ իմ ձեռից առնէ
Ընդոր տան դուռ մոլորի։

73 Շինել են ազիզիս նաշը,
Էլ ոնց ծածկեմ շաղարշը
Առաւօտուց իրիկուն
Լացն է իմ հացն ու ճաշը։

74 Աչունք գալիս ա գալիս,
Էլ ինձի քուն չի տալիս,
Իմ եարըս սալդաթ ա գնում
Սիրտըս այրում ա լալիս։

75 Զաղացիս դուռը տաշած,
Աղլուխիս գիւղը քաշած,
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ,
Օսկէ զալամով 10) քաշած։

76 Մեծ կալը երես երես,
Բակըրգեան Աստուած սիրես,
Բաշ Շորագեալ գընալիս
Իմ եարը հետդ բերես։

77 Վանքը ամպումն ա մնացել
Իմ եարըս վանք ա գնացել,
Նրա տաղերն երգելուս
Վանքը աչքառ 11) է մնացել։

78 Բլբուլ ես մի խաղ կանչէ,
Մարալի 12) պէս տաղ կանչէ.
Նազանի եար քեզ մեռնիմ
Թո՛ղ աշխարքը ամանչէ։

79 Բուանել ես բաղի միջին,
Շամամի 13) թաղի միջին,
Գիշեր ցերեկ միալար 14)
Դու ես իմ խաղի 15) միջին։

80 Սեւ ունքեր կամար կամար
Ես կապրեմ քեզի համար,
Օխտը տարի սեւ հագայ
Քո ազիզ 16) խաթեր 17) համար։

---

1) Բարձր տեղ. — 2) Ժողովուրդ. — 3) Տեսնելու. — 4) Մաշուած, կմախք դառած. — 5) Անցած տարի. — 6) Մունջ. — 7) Պարսիկ. — 8) Սաթ. — 9) Կարիճ, քաջ. — 10) Գրիչ. — 11) Զարմացած. — 12) Եղնիկ, եղջերու. փխ. գեղեցիկ. — 13) Սեխի փոքրիկ տեսակը՝ առհասարակ նարնջագոյն եւ հոտաւէտ է. — 14) Միշտ. — 15) Երգ. — 16) Հարազատ. — 17) Ցարդ, պատիւ։

81 Զորս տարի ա գընացել ,
Սիրտս դաղ 1) է մնացել ,
Եար ջան վադէդ 2) անցել ա
Երկու ամիս ա մնացել ։

82 Քանաքեռ բարձր տե՛ղ ա ,
Զուրը հիւանդի գե՛ղ ա ,
Սիրած սիրածին չեն տայ
Էս ի՞նչ անօրէն գե՛ղ ա ։

83 Վերնաքամին գալիս ա ,
Թիկնամէջս տալիս ա ,
Մէյդան արէ՛ք 3) անց կենամ
Կարօտ եարս գալիս ա ։

84 Հագինդ կարմիր շալ է ,
Կերած կաթդ հալալ է ,
Զը լինի՛ որ ինձ թողնես
Եարդ քեզ պէս մարալ է ։

85 Եար ջան դառել ես փաշա ,
Կերածդ սիպտակ լաւաշ ա ,
Եար ջան շուտով դո՛ւս արի ,
Գեղն եկել ա թամաշա ։

86 Բուրդն հասաւ մեր գեղը ,
Տղայ ես գնա էն տեղը ,
Թէ սիրել ես դու ընձի
Քաղէ ախմախի բեղը ։

87 Հաւը թռաւ թառն էլաւ ,
Մեր բանը դաւոշն էլաւ ,
Սաբաբի 4) որդին մեռնի
Դուշմանի սրտոշն էլաւ ։

88 Ծառը բերել ա ծիրան ,
Եարըս եար չի այլ ջէյրան 5)
Որ նա՛ իմ սիրած եա՛րն ա
Էդ գիդա ողջ Հայաստան ։

89 Գեղի միջին մեծակ ես ,
Լուսնեակ ու արեգակ ես ,
Երգէ՛ երգելուդ մեռնիմ
Պապոնց բաղի սոխակ ես ։

90 Դու իմ թառլան եա՛ր ես ,
Երկընքի մեծ նուբա՛ր 6) ես
Ա.ըի՛ հետս պակ դիր ,
Խոջայի բարեբար ես ։

91 Օչխարն քաշուել ա եայլաղ 7) ,
Ալուր բիթուն 8) ա չարմաղ ,
Մէ եար ունիմ խօրոտիկ
Քաղքու քուչումն ա դապաղ 9) ։

92 Ընկել ես մեր գեղից գեղ ,
Էլ չես թողել մաքուր տեղ ,
Ամենիս հոգին առել
Քեզ ես դուս բերել անմեղ ։

93 Սէյրըդ 10) լըման ա ջէյրան ,
Աղբէր եղել այ հէյրան 11) ,
Տէանում եմ որ սիրում չես
Էլ չը դո՛ւս գաս մեր մէյտան ։

94 Նոր-տարուն ինձ խօսք տուիր ,
Սիրտս կրակով լցրի՛ր ,
Ա.սա՛ տեսնեմ , ո՞վ արեց ,
Որ ինձ էսպէս քցեցիր ։

95 Զուռնա՛ դաստա 12) արէ՛ք ,
Իմ եարիս տունը տարէ՛ք ,
Երբ ես ձեզ աչքով անեմ
«Տարան-տարան»-ը չալէ՛ք ։

96 Վերմակդ ներքեւ քաշէ ,
Եարդ եմ , եկել ինձ աշէ՛ , 14) ,
Թէ սիրում ես ընձի թո՛ղ
Պարկեմ , էլ սիրտս մի խաշ ։

---

1) Այրուած · — 2) Ժամանակամիջոց · — 3) Տեղ տուէք · — 4) Պատճառ · — 5) Եղնիկի տեսակ կենդանի · — 6) Ընծայ , նուէր , պարգեւ · — 7) Ամառանոց · — 8) Բոլոր · — 9) Կաշէգործ · — 10) Մանդալը · — 11) Հիացում · — 12) Խումբ · — 13) Նուագել · — 14) Նայի՛ր ։

97 Պառկել ես կակուղ հողին ,
Մուրազըս փորս թողին ,
Կարմիր գիւլուլէն 1) գիպնի
Գէշ մարդու կուշտ ու կողին ։

98 Գընա՛, ելի՛ դէմի սար ,
Սէր ու սաւդէն 2) հեռդ տար ,
Քեզի էդ տեղ քցողը
Բալքի 3) էղնի տարբէդար 4) ։

99 Ախչի , արի՛ մեր բաղը ,
Պոկեմ շամամի թաղը ,
Քո էրեսի շափաղը 5)
Հանել ա սրտիս դաղը ։

100 Ախչի՛, նատի կար արա՛,
Ինձի քեզի հար արա՛,
Բազի էն քուչումը արի ,
Զեռքերդ չարդախ 6) արա՛ ։

101 Ելայ երդիկը բացի ,
Տեսայ հարիս ու լացի ,
Ով սիրածս ինձի չը տայ
Կարօտ մնայ օրուայ հացի ։

102 Է՛նա , տղէք թօվ էղան 7) ,
Աղբէրս ու հարս երեւցան ,
Էնոնք որ պար բոլորուան ,
Աղբէրս ու հարս մոլորուան ։

103 Ղօշի վանքի ղչերը
Ոտս ծակին փշերը
Էրնէկ կը սամ էն օրուան
Որ պաչեմ քո թշերը ։

104 Քեալլա-զադէն արտ չ'ունեմ,
Հալղը 8) գիտէ գարտ չ'ունեմ,
Դարտը ընձի տարել է
Ջահել եմ՝ խաբար չունեմ ։

105 Մի ջաղաց էրկու գրոնի ,
Բարձը դըրէք հարըս կոնի ,
Ես ու դու մի բաղումը պտենք ,
Ես չինարի դու նռնի ։

106 Բերդիս կըտերը ցել ունեմ ,
Ալ աբրեշումը թել ունեմ ,
Թելիկ-մելիկ սարկաւագ ,
Ես քեզանից մէյլ ունեմ ։

107 Մեր առուն շատացել է,
Հարս անհետացել է ,
Քանի վախտ ա չեմ տեսել
Դարդերըս թաղացել է ։

108 Մէ հար ունիմ աչի ա 9) ,
Մէջքը բարակ դամչի ա 10) ,
Զը գիտեմ անըմն ինչ ա ,
Մի գիւղի բոյախչի ա 11) ։

109 Ախչի ի՛նչ շատ մազ ունես,
Սողանու փարուազ 12) ունես ,
Խօսքիս ջուղաբ տալիս չես
Ի՛նչ շատ էշի 13) ու նազ ունես ։

110 Ցնծա՛ արաղի թասին 14) ,
Բոբիկ կուգայ հաւասին 15)
Գլխին զարկէք քոռանայ
Զեռքից խլէք աբասին ։

111 Ախչի նատել ես կարի ,
Ալ արխալըխ մի՛ կարի ,
Հարիդ սալդաթ են տարել
Պըտի սպասես չորս տարի ։

112 Բաղումը կար բաղմանչի ,
Շուրին ածէր ու կանչէր, [ռան,
Թաբուն տարած 16) դուրս թը-
Մինն իմ հարին նման չէր ։

---

1) Գնդակ · — 2) Սէր · — 3) Թերեւս · — 4) Ուժդեհ , տարագիր · — 5) Գեղեցկութիւն · — 6) Սրահ , ծածկոց · — 7) Հաւաքուեցան · — 8) Ժողովուրդը · — 9) Որսորդ · — 10) Եղէգն · — 11) Ներկարար · — 12) Գլխի զարդ · — 13) Բաւիչ տեսք · — 14) Բաժակ · — 15) Զըգտում , ուզելը · — 16) Խմբ ած ։

113 Պուճուր 1) աղջիկ գալում 2)ես ,
Մազերդ սղալում ես 3) ,
Խունջիկ մունջիկ 4) մի էղնի ,
Ինձ առնելու կամ ունես ։

114 Աչքերդ շատ չալչալ ա 5) ,
Ամէն թշիդ մի խալա ,
Ա՛խ, էն օրը ե՞րբ կը գայ
Գլխիդ քցես ալվալա 6) ։

115 Վերի սարից գալում ես ,
Շաքարի պէս հալում ես ,
Բերանդ լէն մի՛ բանա
Դու քու ազգով մալոդ ես 7) ։

116 Մեր տան եանէն մի մառան 8),
Տղերքն եկան ես դառան ,
Չեռս տարայ թէ բռնեմ
Դիմի լալ ու մարջան դառան ։

117 Աղբե՛ր, եօլտաչներդ 9) եկան,
Եօլտաչներիդ ես զուրբան ,
Ներանց միջի պզտիկը
Ինձ արել ա հոգեհան ։

118 Ինձի համար լուսնեակ ես ,
Եաղութից 10) անգին ակ ես ,
Ասաբծու զազաբին 11) գաս
Թէ գուրդ ինձ դէմ փակես ։

119 Զաղացս մանի , մանի ,
Քունս անուշ կը տանի ,
Իմ եարը սարում քօլում
Իմ քունը ո՞նց կը տանի ։

120 Ղարաֆիլ եմ 12) տա՛լ չ'ունեմ,
Խաս 13)իգիթ եմ 14)եա՛ր չ'ունեմ
Եարս եկաւ անցկացաւ ,
Զահիլ եմ խաբար չ'ունեմ ։

121 Սեւ փշին ճիտս եմ քցել ,
Կըրակը սիրտս եմ լցել ,
Էս օր հինդ օր է չեմ տեսել ,
Իմ եարը միտս եմ քցել

122 Ամպել ա ամպա տակին ,
Ծունկս ծնկանդ տակին ,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի ,
Մեխակի ծառի տակին ։

123 Ղօչ եմ բերել տուրբ Մուղնի
Որ մուրազին նա հասնի ,
Հանենալանքն էլ չեմ թողնի
Որ եարս ինձի գանի ։

124 Մացի ողբալով լալով ,
Գլխիս մազեր փեսելով ,
Փեսատեցի բեխս ու միրուս
Իմ եարիս եաքից լալով ։

125 Թարաքեամէն իր օրէն 15) ,
Տուէք մինթանիս 16) քեօրէն 17),
Մինթանիս քեօրէն լէնա ,
Իմ սիրած աղէն է՛ն ա ։

126 Բաբճիս 18) էրէսը նշխուն է ,
Փուրոջս անունը Դշխուն է ,
Ինձի սիրող էրկէն աղէն
Ասատուած վկայ շաշխուն է 19) ։

127 Գընում ա, ա՛խ եարս, եարը,
Իմ սկեսրոջ մինուճարը 20) ,
Մէրս շատ ա գարդ անում ,
Լալիս ա իր զարարը 21) ,

128 Իմ աղբերը սարումն ա ,
Շուին գոակածալումն ա ,
Աղբէր ջան չուիդ ածա՛ ,
Քիրդ Լօռուայ քարումն ա ։

---

1) Փոքրիկ · — 2) Զարաճճի · — 3) Ուզել · — 4) Կոտրտուիլ, նազ ծախել · — 5) Գոյնզգոյն · — 6) Կարմիր գլխնոց · — 7) Խեղճ, ողորմելի · — 8) Ուտեստի պահեստ · — 9) Հատակակից · — 10) Ցակինթ · — 11) Պատիժ · — 12) Մեխակ · — 13) Մաքուր , զուտ · — 14) Կարիճ · — 15) Խումբ , բանակ · — 16) Մի տեսակ մահուդ · — 17) Ատատ · 18) Կոշիկ · — 19) Անխելք · — 20) Մի հատիկ զաւակ · — 21) Վնաս ։

129 Լուսի լուսնեակը ես եմ,
Ծովերի ձուկը ես եմ,
Քշերուայ փախնող ազջի՛կ
Հետիդ ընկերը ես եմ։

130 Զեռքդ տուր որ քեզ բռնեմ
Էրեսդ ղալամով քաշեմ
Նա թո՛ղ ճաքի՝ հէրսը դայ 1)
Ես պըտի քեզի պաշեմ։

131 Կայնել ես բալ կը քաղես,
Վրէս մարջան կը շաղես,
Լալն ու մարջան չեմ ուզե
Կուզեմ որ վարդը քաղես։

132 Եօրղանդ երկարել ա,
Երեսդ, գլուխըդ ծածկել ա,
Մի բա՛ց արա, որ տեսնեմ
Կրակը սիրտս վառել ա։

133 Կանչում եմ եարս չի գալիս,
Հէջ 2) ինձ ջուղաբ չի տալիս,
Վա՛յ քու հէրն էլ անիծեմ,
Քեզ անկողնի մէջ տեսնեմ։

134 Սաղ տարին ծում ու պաս եմ,
Քեզ համար ոսկէ դաս եմ,
Սրտիս միջի դարդերը
Ծառազարդին քեզ կասեմ։

135 Սրազն բերել ա աւազ,
Գլխիդ ունիս օսկէ մազ,
Ե՛կ, ինձ սիրէ՛, իմ քով ե՛կ,
Բոլ ա մեն էկար գեաւազ 3)։

136 Սրեւը կամար կամար,
Կապել ես օսկէ քամար,
Օսկիդ ընձի չի խաբի
Մնացել եմ եարիս համար։

137 Կայնել ես էլի դռներ,
Տա՛ր արածէ մեր գառներ,
Քեռաքի՛ր 4), ընձի թողել ես
Գէշի եախէն ես բռնել 5)։

138 Կարմիր խասա 6) քիսացու,
Սպիտակ կովը մսացու,
Դու իմ հօրը հարսնացու
Ես քու հօրը փեսացու։

139 Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն արօտ ա,
Թամամ օխտը տարի ա
Քիրն աղբօրը կարօտ ա։

140 Լուսնակ մտաւ ամպի տակ,
Եարըս կայնել ա քամակ,
Բան ու գործը հատել ա,
Ասում ա՝ «արի ամաղ 7)»։

141 Քինացել ես եկել ես,
Վոնտերդ ցեխումը պուկալ ես 8),
Խելքիդ զուրպան, ա՛յ ոզայ,
Դէօստ ու դիւշման ջոկալ ես։

142 Խագեր ես շալէ կաբէն,
Հըչ չես խարցնէ մըր հալէն 9)
Վըր մինն էլ դաս մըր տունը
Հոգիդ կ'առնեմ մըջ գլխէն։

143 Գեռին էն ղոլը քարքարոտ,
Քաթան շալը ծըլծալոտ,
Սաղջի կայնի մէկ պաշեմ,
Ձեր հորթերը տանեմ արօտ։

144 Պառեկ 10) դէմ էրինք սարին,
Աչքս ընկաւ գիմաց քարին,
Դիւշման մըզի քաշեց սուր,
Էլ ետ չը գայ է՛ն տարին։

---

1) Բարկանայ։ — 2) Բոլորովին։ — 3) Թափառաշրջիկ «աղարտ»։ — 4) Անհաւատ։ — 5) Վզից բռնել։ — 6) Կաւելի տեսակ։ — 7) Բարութիւն։ — 8) Ոտները ցեխոտել։ — 9) Դրութիւն։ — 10) Մէջքը, թիկունք։

145 Էլ չըկայ օր ու աբեւ
Կարաւ մըր անուշ բարեւ ,
Ամառուած զմէն 1) կուտեռնայ
Նատուկ մըր գլխու վերեւ ։

146 Ֆոլը քոլին թուշումը 2) ,
Ծեռնը պիժան կիւշումը ,
Իմ եարին ըշտե՛ղ տեսար ,
Շուշուայ զալին թուշումը ։

147 Ոչխարն էլալ ա դիւզը ,
Զոկեցէք ալագէօզը 3) ,
Իմ հէր քեզ աղջիկ չի տայ
Սրբի էրէսիդ թոզը ։

148 Ախչի էն օր մեռնէիր ,
Որ կը մտնէիր աւազան ,
Ամի՛ գնանք մեր խօզան 4)
Քեզի գովամ զանազան ։

149 Ամեւը գընաց մտաւ ,
Սիրած սիրածին գտաւ .
Թէզ արա՛ , էլի՛ երթանք ,
Պահած զատերս փտաւ ։

150 Մտալ եմ գետը , խոր ա ,
Ոսկայ հալաւին 5) նոր ա,
Ա՛յ նանի , մինն ալ կարի՛ ,
Ոսկի կոճակնի չարի ։

151 Եշըմ եմ 6) երեւում չի ,
Ծառերդ տերեւում չի ,
Ամչքերս ման եմ ածում ,
Էն եարը երեւում չի ։

152 Ծաղիկ եմ քաղել դեզին ա ,
Իմ եարը ձեր գեղին ա ,
Հել ու մեխակ շատ ունեմ ,
Հըրէ՛ , եարիս ձեռին ա ։

153 Սիրո՛ւն, էս քեզի նուրար,
Եղի՛ր ընձի սիրահար ,
Որ հոգիս տեղում ըլնի ,
Քեզի ըլնեմ մի խե՛ղճ եար ։

154 Ֆամին կանի բոքին տանի ,
Ոչխարն թոքին կանի ,
Սիրի սիրան հանողը
Հոգին սատանէն տանի ։

155 Եարս էկաւ էփենք քեաբաբ,
Ամենքին կը տամ ջուզաբ ,
Ֆանդի , աւերուի տունը ,
Ով մէջ տեղ ընկնի սապապ ։

156 Քաղքէն բերել ես բուլքի ,
Հէչ չես աշէ մեր մուլքի ,
Ես ո՛րն անեմ ըսէ՛ ինձ ,
Քեզի կը գործեմ չուլքի 7) ։

157 Բարակ ճամբէն մտել եմ ,
Կորցըրածս գտել եմ ,
Սրտիս սիրածն ինձ տուէ՛ք
Մի՛ ասէք թէ փտել եմ ։

158 Եար մ'ունիմ Բուլանուխը
Կարեց ան մըր տան մուխը ,
Մօհլաթը 8) անց ա կացեր ,
Եարս խոշ 9) եար ա գտեր ։

159 Ջրի վրան սաղ պտի՛ ,
Իմ էօրտակս ղազ 10) պտի՛ ,
Հընչիս ա պէտք բեագի 11) տղան
Իմ եարս նախշուն պտի ։

160 Ախպէր ունիմ աչի ա ,
Մէջքը բարակ ղամչի ա ,
Ո՛չ թուր ունի , ոչ թվանգ ,
Լեզուովը թալանչի ա ։

---

1) Բոլորը . — 2) Թուփը թփի մօտ . — 3) Կարմրաշէք . — 4) Քաղաք արտ . — 5) Շոր, հանդերձ . — 6) Նայում եմ . — 7) Գուլպայ . — 8) Պայմանաժամ . — 9) Դուրեկան . — 10) Սագ . — 11) Բեկ ։

161 Անունդ կարդացող ա ,
Աղբէրդ գիր բացող ա ,
Մի գի՛ր բաց անել տուր
Տեսնե՛նք ո՞նց իմացող ա ։

162 Զաղացիս դուռը կանաչ ,
Դուրս կուգաս ամանչ-ամանչ ,
Զուխտ ու կենտ կապիդ մեռնիմ
Մինն ալ ա , մինն կանանչ ։

163 Թէջ 1) եմ արել մաղրմ եմ ,
Զեռքէդ բռնել խաղրմ եմ ,
Նատողներ լա՛ւ սէյր արէք 2) ,
Սաւդաքեարին դաղեր եմ ։

164 Տանս տակը շըլորի ,
Ճղերը եա օլորի ,
Էրնէկ կը տամ էն քըւոր
Օխան աղբօր թագն բոլորի ։

165 Բլբուլի պէս եար ունիմ ,
Գըլխուց ոտը ալ ունիմ ,
Ասուած էնոր օր չը տայ ,
Լեաշակ պատրած տալ ունիմ ։

166 Թխպալ ա թոր 3) չի կէալի ,
Մթնել ա տուն չի կէալի ,
Տեղ եմ ցկալ 4) , պէարց 5) դրալ
Աչքերս քուն չի կէալի ։

167 Սանրածս օսկէ մաղ ա ,
Հագինս կապուտ խազ 6) ա ,
Բուզման 7) գցած ախալըխ
Քեզի կը տամ թա.ազա 8) ։

168 Մեր դրան մօտ կայնել ես ,
Թամամ զահլէն տարել ես 9) ,
Քեզ չեմ ուզի չուր 10) էն վախտը
Թազա աղլուխ չը բերես ։

169 Վարդ եմ քցել մեր բաղը ,
Բաղաջ չինել շարմաղը ,
Քոռանա՛ քու մի աչքը
Մոռացար հացն ու աղը ։

170 Մեր արտը հէրդ վարեց ,
Քեաթիպէդ 11) զերձիկ կարեց ,
Աչք ու ունքով իշմարըդ 12)
Ինձի ջանդահան 13) արեց ։

171 Բահն էր ուսին գըրած ,
Թաւշադն էր 14) ոսկեջրած ,
Աչքը ունքիդ հովարած ,
Խիստ էր ռանդդ 15) թռած ։

172 Ծրաւալ եմ ճիւր պիրէ՛ք ,
Ըսպահանու հուն պիրէ՛ք ,
Կը մեռնիմ էս դարիպ 15) տեղը,
Դարիպ դուշս տիւս պիրէ՛ք ։

173 Տուն ու դուռը աւլեցի ,
Սեղանս պատրաստեցի ,
Էկաւ իմ սիրած եարը
Էլայ կողքը նստեցի ։

174 Համբարձում մեր դուռ հասաւ ,
Զահէլներ ձեր օրը հասաւ ,
Էրնէկ տամ ձեր սրտերին ,
Եարը ընձի բան չ'ասաւ ։

175 Գեամ ա 16), գեամ ա իմ եարը,
Քոլերով ա գեամ վարը ,
Հոգիս հոգուն եմ դուրպան
Անուշ ա սիրած եարը ։

176 Ծառ եմ տնկել քիրազի ,
Գիշեր քընայ երազի ,
Ընկերտիք Աստուա՛ծ կանչէք
Ես էլ հասնե՛մ մուրազի ։

---

1) Ցորենի կոյտ · — 2) Նայեցէք · — 3) Անձրեւ · — 4) Գցել · — 5) Բարձ · — 6) Կապոյտ գծով · — 7) Ոսկեթել · — 8) Նուէր · — 9) Զանձրացնել · — 10) Մինչեւ · — 11) Կանացի կաշէ վերարկու · — 12) Ներշանարիկ · — 13) Ուժաթափ · — 14) Գոյն · — 15) ա. օտար · բ. պանդուխտ ։

177 Եարս եար ա ու մարալ ,
Ստեղծուել ա ընձի համար,
Ո՛վ որ կուզէ թո՛ղ խօսի ,
Նայ ա սրտիս սիրահար ։

178 Տանս տակը աղ մոչի ,
Օխտը տարի եար եչի ,
Աչամհատ ըստհէնց պան կըլնի,
Եարն ալ կը տաՙն ուրիշի ։

179 Սոխ ա ըսել դաշտումը ,
Զուր են լցրել տաշտումը ,
Բերէ՛ք եարիս լոզացնեմ ,
Կուզէք ինձ դրէք նաշտումը ։

180 Քաղքի եարը քահրբբար ,
Իմ բոյ, քու բոյ բարաբար 1) ,
Ինձորը քցեմ , ի՛կ , տա՛ր ,
Դու ալ դառար բէհղբբար 2) ։

181 Քե մեղք չ՚ունես, անմեղ ես ,
Մեր գեղին գեադի 3) տեղ ես ,
Հայի լեզու չես գիտում
Փէտը ձեռիդ հօտաղ ես ։

182 Չան գիւլում կասեմ կը չարեմ,
Ծոպրակը կածեմ կը կարեմ ,
Կարէ-կտուր ման կը գամ
Քանց քեզ լաւը կը ճարեմ ։

183 Ո՛չ վարդ կուզեմ, ո՛չ շուշան,
Ո՛չ Մաղնի , ո՛չ ս. Նշան ,
Թէ եարը ինձ սիրում ա,
Բոլորին կըլնեմ դուրպան ։

184 Կաւն առայ գացի աղբիւր ,
Թասը տուի առայ պաղ ջուր ,
Հէր ու մէր աչքերդ կոյր ,
Տըղին տես ազջիկդ տո՛ւր ։

185 Սէնց նիւր հանդերը ,
Թազ արծաթի բէանդերը ,
Դանակ պտի սիրաս ճզենք
Շարուէ չարան դարտերը ։

186 Էս օրս ի՞նչ օր ա, օր ա,
Եարիս համար ինչ օր ա ,
Ո՛չ ծնողք ունինք, ո՛չ ազիզ,
Էրկուսիս բանը նո՛ր ա ։

187 Թառամել ա իմ վարդը ,
Մեռել ա սիրած մարդը ,
Էն օրից էլ սկսած
Էլ չ՚եմ քաշել իմ զա՛րդը ։

188 Ախչի՛ անուանդ Թագուն ,
Նատեր ես հօրդ սաքուն ,
Ի՞նչ չինարի բոյ ունիս ,
Երանի եարիդ հոգուն ։

189 Տէրտէրը օրհնէ ձեր տուն ,
Ասատւած օրհնէ ձեր մեծ բուն ,
Սիրածիս լաւ մեծացրէք
Ինչրու ես տանեմ մեր տուն ։

190 Եար չան քշերով արի՛ ,
Կողքի պատերովն արի՛ ,
Թէ որ տեսնող էլ ըլնի
Դու դպա ընձի՛ արի՛ ։

191 Իմ գիւլումը քաղած ա ,
Պանձր տարին կէաղած ա ,
Հով վեր իմ գիւլումիս տեղն ասի,
Հէրը , ախպէրը թաղած ա ։

192 Արագն անցայ ես լալով ,
Եարիս վրայ ողբալով ,
Եարիս տարան քրդերը
Փշերն անից գողնալով ։

193 Կը գնամ Ուշի . Օշական ,
Աշտարակն ու Բիւրական .
Կը մանգամ ես տընէ տուն ,
Կը գտնեմ մի սիրական ։

194 Սիրել եմ սիրած եարը ,
Գեղի մեծ գիւքեանդարը 4) ,
Նա էլ ընձի՛ կը սիրէ ,
Գիդա գեղի բազարը ։

---

1) Հաւասար . — 2) Թափառաշրջիկ . — 3) ա. Ծառա . բ. անմիտ երիտասարդ . — 4) Խանութպան ։

ՀՍՍՌ ԱԳՐ.ՀԱՅ

195 Սարի խոտը ծեղ-ծեղ ,
Ախպէր գընանք մին տեղ ,
Որ կեռզերը վըրայ տան
Գլուխըս գնեմ գլխիդ տեղ ։

196 Վերմակդ վըրէդ ես քաշել ,
Երեսըդ ղալմով նախշել ,
Այրուի քու սիրտն ու արեւ
Փանի՞ ինձպէս ես խաշել ։

197 Բահ եմ քցել բահ կանեմ ,
Շաբաթը բիթուն 1) բան կանեմ ,
Ազիզիս ինձի տուէք
Գլուխը օսկէ չար կանեմ ։

198 Մէր ես հէչըմ ռահմ 2) չ'ունիս ,
Ենդի 3) եարիս վարդ չ'ունիս ,
Եկել քու դուռ եմ ընկել ,
Հէչ դու մօր ջիգեար 4) չունիս ։

199 Շողքը ընկեց մեր պատին ,
Արքայութիւն իմ տատին ,
Վոգիս 5) էրվի ա՛յ տատի ,
Ինձ խի՞ 6) տվար չոլախի 7) ,

200 Ծէ եար ունիմ նապըշյար 8) ,
Իմ սիրտ կըրակ , էնոր քար ,
Արի էրեսիդ պաշեմ ,
Ծնուել ես ընձի համար ,

201 Փռուած է նախշուն խալը 9) ,
Եկել ա մեր մարալը ,
Աղբեր ջան գու խոսք արա՛ ,
Հարցրու իմ եարիս հալը ։

202 Էկէք քինանք էն օխը ,
Գիւլպատաղին կիլօխը ,
Ամեն ծառան մին փշատ ,
Իմ եարին էօմրը 10) շատ ։

203 Ծաղիկ ունիմ նարընջի ,
Բերին եարիս եափընջի ,
Էն եարին ես չե՛մ ուզէ ,
Որ ման կիգայ խաբընջի 11) ։

204 Մուխ ա ելնում է՛ն զօլից 12) ,
Ցուր ա գալիս էն զեօլից ,
Ա՛յ ջուր , թէ եարիս տեսնես
Մէկ մէկ ասա՛ իմ հալից ։

205 Սիրտդ պինդ ա քարից ,
Հարցըրել եմ տարից ,
Հոգիս եկել կպել ա
Էդ քու սեւ ջիգերից ։

206 Ալամ աշխարհը գիտա ,
Որ նա իմ սիրած եար ա ,
Էլ ինչ սազմոս , յատաւուրք ,
Նա ամենից խաբար ա 13) ։

207 Ա՛յ հար արա՛ 14) , հար արա՛ ,
Ոսկէ քեանքիւլդ էլ արա՛ ,
Իմ հէր քեզ աղջիկ չի տալ ,
Գլխիդ վախտին ճար արա՛ ։

208 Գնտիկ մնտիկ գնտանոց ,
Մանտր թփեր երսընոց ,
Բաց կոճկըներ գամ քու ծոց
Ազատ 15) տըղին դարտ ու խոց ։

209 Գեղին բոլոր չիման 16) ա ,
Զորս բոլորը տուման 17) ա ,
Ախչի՛ , արի փախցընեմ ,
Հէրդ ու մէրդ չ'իմանայ ։

210 Մէրս արաւ ձուաձեղ ,
Վըրէն լցրեց լիքը եղ ,
Տեսաւ փեսէն տուն չեկաւ ,
Կատուն կերաւ փեսի տեղ ։

---

1) Բոլոր · — 2) Գութ · — 3) Ուշ եկող · — 4) Գութ , սիրտ · — 5) Հոգիդ · — 6) Ինչո՞ւ · — 7) Կաղ · — 8) Տուն ներկող՝ նախշող · — 9) Կարպետ · — 10) Կեանք=ումբր · — 11) Թափառաշրջիկ · — 12) Կողմից · — 13) Տեղեակ է · — 14) Կանչի՛ր · — 15) Զ'պատկուած · — 16) Կանաչ · — 17) Մառախուղ ։

211 Ա՛յ օրն օրն ծաղիկ ,
Կարմիր ու տօրն ծաղիկ .
Ալվալայ խալխ եմ կիտել
Էն էլ քեզ օրն ծաղիկ ։

212 Գնացի ճուրը ճրագով ,
Մէջքիս տուին ուրաքով ,
Իմ մօր իմ հօր ինչ ասեմ ,
Ինձ խե՞ տուին կըրակով ։

213 Բաղըմ ունիմ զամուշ է 1) ,
Միջի մէյվէն 2) անուշ է ,
Մի՛ք մեղ դըրի մէր ու քուր
Սրտով սիրածն անուշ է ։

214 Շիմշիր գդալ Շիրվանի ,
Քամին թել թել կը տանի ,
Մի՛ք մեղ դըրի մարիկներ ,
Էս սէր եաման կը տանի ։

215 Վարդավառը հասել ա ,
Բան ու գործս թափսել ա ,
Թէ սիրել ես ջուր շաղ տուր
Կրակս թէժացել ա ։

216 Ալուր կեռ ու կամար
Ես մեռնիմ քեզի համար ,
Օխտը տարի դիմացայ
Մինակ քու խաթեր համար ։

217 Փոցիսը ծիրանի կոթ է ,
Սիրտս եարալու խոց է ,
Սիրտս սրտումդ պահ ,
Գիտենաս սաւդէն ոնց է ։

218 Ձեր բաղի դուռը բաց ա ,
Ոտներդ շաղով թաց ա ,
Եարիցդ հեռացել ես
Աչքերդ լիքը լաց ա ։

219 Շողքը տուաւ էն պատին ,
Մէջքը կոտրի իմ տատին ,
Հարուստ տեղը տեղ թողեց ,
Ինձ տուեց էս աղքատին ։

220 Վարդ քցի , ձեռնով բռնեմ ,
Եարալու սրտիդ մեռնիմ ,
Քեօլկիցը 3) մի՛ դուս արի ,
Բալքի 4) հաւասս առնեմ ։

221 Հերթը մերն է ջուր բերենք,
Մեր սիրունին տուն բերենք ,
Թէ որ եարս նազ անի
Կապած ձեռներով բերենք ։

222 Թորկեր եմ 5) իմ եարը ,
Իմ սրտի սիրահարը ,
Եաման էս ի՞նչ քէբաղդ եմ
Կորցրել եմ իմ եարը ։

223 Ուռի ես կռանալ մի ,
Մեր գոնէն հեռանալ մի ,
Ջահել ես , ջահել մնաս ,
Ասում եմ ծերանալ մի ։

224 Առաւօտուն ժամ կ'ասեն ,
Տէրտէրները տաղ կ'ասեն ,
Եար ջան հուջաթ 6) մի ըլնի
Խըմի՛ր իմ գինու թասէն ։

225 Քօլերը բռնել ա ձուն
Կը քանդես դու մեր տուն
Ես ի՞նչ ըրի մէ ըսա՛ ,
Աղջիկդ տուի՛ր քեռաֆիրուն ։

226 Հի՞նչ անեմ , հընչիս դարտ ա ,
Կարան սազիս փարդայ 7) ,
Աչըդ չի՛ աչըդ դառայ
Եարալու եարիս դարտ ա ։

227 Համբարձումն օրն ա գալում,
Եարըս մնացել ա սարում ,
Եար ջան նշան կը դընեմ
Համբարձման օր՝ «Ջան-Գիւլում»։

228 Ախչի անուանդ Շուշան ,
Ճերմակ բուխաղ 8) թուխ նշան,
Ես քու եարդ տեսել եմ
Զեռքը ծոցին փոշիման 9) ։

---

1) Եղեգն · — 2) Պտուղ · — 3) Հով տեղ · — 4) Թերեւս · — 5) Թողել եմ · — 6) Հակառակութիւն · — 7) Լար · — 8) Մնոտի վերին մասը · — 9) Զղջալ ։

229 Ալ քօղով հարսներ տարան
Մընք մացինք գիլու բերան,
Մըր ճժերն 1) ու աղջիկներ
Զընք գինա գորի՞ 2) կորան։

230 Կարբի ընկել ա հովը,
Եարըս ընկել ա ծովը,
Աստուա՛ծ սիրէք ջահիլներ,
Ինձ գցեցէք եարիս քովը։

231 Հէր ես հէրութիւն արա՛,
Մէր ես մէրութիւն արա՛,
Թէ աղջիկդ ընձի չես տայ
Սրախս մի հաւար 3) արա՛։

232 Կարի՛ճ, թեւերդի քչաէ 4),
Շուն չէիր կոզէն քչաէ 5),
Մէնծ ու պզաիկ խրատ հիտրաց 6)
Դու մէկ գրբով կորչաէ 7)։

233 Բոխչայ 8) բահար եմ կապալ,
Աղ ու գհար 9) եմ կապալ,
Ես էն եարին հաւան չեմ
Օժաւ վըրայ են կապալ։

234 Կայնել ես կանաչ տափին,
Առուի գրաղի 10) ափին,
Իշալրա 11) մեր չար կամի
Թեւերը պըտի թափին։

235 Եարս մաւ էն գռնով,
Նշան արաւ ինձ կռնով,
Եղնից քնացի թէ բռնեմ,
Ելաւ փախաւ միւս գռնով։

236 Ընձի կասեն տիրացո՛ւ,
Խօսքով ընձի մը լացո՛ւ,
Աչխարք ընձի նահատակեն
Խօսքով ընձի դու իմցո՛ւ

237 Կայնել ես պատին տակը,
Ցոլայ կը մատնուդ տակը,
Իմ կարած ալտախչինս 12)
Դրել ես ֆասիդ տակը։

238 Զափարի պատմա կոխել մի՛,
Շահին զալպա 13) փոխել մի՛,
Իմ հար քեզ աղջիկ չի՛ տայ,
Քեռնկիլն իմ ա, վախել մի՛։

239 Աչխարքի խօսքը ի՞նչ ա,
Գէշ մարդու ասածն ի՞նչ ա,
Ես սիրեցի ես կ'առնեմ
Էլ ձեր խօսալը ի՞նչ ա։

240 Արագի ջուրն ի՞նչ կանեմ,
Ասկեար քիշմիշ 14) ի՞նչ կանեմ
Սեւեր կապած կը մընամ
Ես իմ եարին կը ճարեմ։

241 Կոզբայ սարը զօշայ է,
Միջի մարդը բոշայ է 15),
Մաշիկ 16) ավէք դուս յելնեմ
Ինձ էլ չ'ասեն բոշայ է։

242 Ազիզիս կանչէ՛ք շուտ գայ,
Սրախս եարիս գարման տայ,
Գնացէ՛ք ասէ՛ք հօրս ու մօրս
Թէ ձեզ եղել եմ փեսայ։

243 Զըրի ճամփէն ա՛լ կանեմ,
Սպիտակ երես քալ կանեմ,
Շան տղայ չատ մի՛ հաչա,
Քեզի հալ ու մաշ կ'անեմ։

244 Արագ խօսի՛, լեզու ա՛ռ,
Դու իմ եարիս խաբար տա՛ր,
Ասա՛. «ես հալ մաշ եղայ»,
Շուտով արի՛ ձեր տուն տա՛ր։

---

1) Երեխայ. — 2) Ո՞ր կողմ. — 3) Օգնութիւն. — 4) Ես քաշէ. — 5) Ափի՛ր. — 6) Միասին. — 7) Կարտել, խողխողել. — 8) Կապոց. — 9) Մի տեսակ բանջար. — 10) Կողքի. — 11) Ցոյս Աստուած. — 12) Մի տեսակ հայկական գլխարկ. — 13) Կեղծ. — 14) Խաղողի տեսակներ. — 15) ա. Մի որոշ ժողովուրդ-ցիգաններ. բ. սեւ երես ունեցող գ. անպէտք. — 16) Կօշիկ։

245 Եարս մի դիւքեանատար է ,
Ատածըս մինուճար է ,
Բոյ բուսաթով 1) մի ջիւան
Ինձ սիրուն սիրատար է ։

246 Էս սարը բարձրը սար է ,
Ժամ ին կանգնել սեւ քար է ,
Եարս՝ աղբօրս բարեբար
Էս մեր գեղի ռանչպարէ 2) ։

247 Է՛սա կոխեց մութ գիշեր ,
Ձէնը կարել են ղըշեր ,
Ով ինչ կուզէ թո՛ղ ասէ
Ես կը պաշեմ քո թշեր ։

248 Բոսանը ջրած տեղը ,
Ատեղը թելած տեղը ,
Խաբար տարէք իմ եարին
Հէն եմ իրան դրած տեղը ։

249 Ես իմ եարիս կը բերեմ
Խալխի աչքը կը կապեմ ,
Ասանն էլ որ նրան տանի
Ընդոր դուռն էլ կը թակեմ ։

250 Ա՛ տղայ անուդ ի՞նչ ա ,
Շա՛ն տղայ դաւէդ 3) ի՞նչ ա ,
Կերթամ կ՚առնեմ ղըզըլբաշ ,
Բոյովըդ կտրեմ ղումաշ 4) ։

251 Բարձ ըմ ունիմ ապրեշում ,
Կաշեմ ինչրու իրիկուն ,
Որ եարըս գայ մեր տունը
Շուտ տանք էնոր քունը ։

252 Սարերը ձիւն կալալ ա ,
Ս.բիւ արալ հալալ ա ,
Զալում Գեանջեցի աղջիկ
Դարտերն ինձ կալալ ա ։

253 Սարէն կելլէր էրկու մուխ,
Մէկը հընկաւ , մէկը ծուխ ,
Էրկու գիզալ 5) եմ սիրէ ,
Մէկը չէկլիկ մէկը թուխ ։

254 Խալխի ադաթը 6) էս ա ,
Է՛ս գեռ խօսածի կէս ա ,
Ամեն տանը է՛ն կ՚ասեն՝
Թէ ես եմ ձեր տան փեսայ ։

255 Վարդավառը մօտ ա ,
Մեր ճամբէնը քարոտ ա ,
Գընում եմ եարիս տեսնեմ
Կ՚ասեն ընձի կարօտ ա ։

256 Լուսնեակն է կայնել դա՛ին ,
Պատկերքն է քու պատկերքին,
Լուսնեակ ջան թէզ մի՛ էրթա
Ջուր մէկ էլ՝ գալող տարին ։

257 Ջուր եմ գնում ջուր բերեմ,
Ազիզիս էլ տուն բերեմ,
Աշխարքին էլ ցոյց կը տամ
Երբ իմ եարիս տուն բերեմ ։

258 Ամպել ա օրը սեւ ա ,
Ղուշն ա անցնում անթեւ ա ,
Ես մի զօռ 7) եար ճարեցի ,
Էն էլ ասում են , խեւ ա 8) ։

259 Սէլը եկաւ ցորենով ,
Ես մընացի քու ապով 9) ,
Ատոծ տունըդ չը քանդէ
Դու չես գալիս օրերով ։

260 Սարէն ե՛ս դամ , ձորէն դու ,
Հարսն ե՛ս սիրեմ, կեսուրը դու ,
Տունն ե՛ս քնեմ , կտուրը դու ,
Սիրն ես ուտեմ, մածունը դու ։

---

1) Հասակ ու կազմուածքը · — 2) Երկրագործ · — 3) Կռիւ , վէճ · — 4) Կերպաս · — 5) Գեղեցիկ — 6) Սովորոյթ · — 7) Կարիճ · — 8) Ան-խելք , գիժ · — 9) Ցուսով ։

261 Իմ եարը նոր ա եկել ,
Սարերին քոն ա եկել ,
Թոռ ա եկել թռչել չի ,
Եափունչին չոր ա եկել ։

262 Ասազդ փայլեց երկնքում ,
Քո սէրդ ընկաւ իմ սրտում ,
Աբի՛ , իմ խօսքը լսի՛ր ,
Որ չը մնամ ես կատում ։

263 Փալաք 1) զարկեց սրտիս նետ,
Արտրսունքս էղաւ դետ ,
Ա՛յ ախչի՛ , քու հոգուն մատաղ,
Ինձ էլ չե՞ս տանի քու հետ ։

264 Գընացի սարը սնձի ,
Ոտքս ասաւ մէկ սնձի ,
Տեփա՛ն , միրուքդ խանձի՛ ,
Չը ավիր Սօփոն ընձի ։

265 Կարմիր մեզարով 2) աղջի՛կ,
Գինդ հազարով աղջիկ ,
Նշխուն մեզար զբրմբզի 3) ,
Պատռուխս չըմ առնի՛ քըզի ։

266 Ես կէօրխի ծօրան եմ 4) ,
Մեծ բաղին խնձորան եմ ,
Խաբար տարէք իմ եարին
Օլքայ օլքայ կորսալ եմ ։

267 Ժամի բոլոր աւազ ա ,
Ուսամ՛ , ջուրբէդ դիւվազ ա 5),
Ժամը չինէ՛ , գըլուխ ըն՛ր ,
Վանքը մեզի մուրազ ա ։

268 Գալըդ մէրըկ չ'իմանայ
Քեզի խայտառակ կանայ ,
Ա՛խչի՛ , դու ու քու Աստուած ,
Ընձի տե՛ս յեռոյ գընա՛ ,

269 Ա՛խ էնէմ արուն գուգայ ,
Սեւ սրտիս գարուն գուգայ ,
Ի՞նչ էնեմ էնպէս եարը
Պըտրտուի տարուն գուգայ ։

270 Ա՛խչի իշկայ 6) էն դզին ,
Հարս ու կեռուբ բուրդ կզին ,
Սիրած սիրածին չեն տայ ,
Մեղքը հոր ու մոր վզին ։

271 Նոր եմ եկել հնձանից ,
Դու մի փախչի ինձանից ,
Ձեր տունը Աստուած քանդի ,
Թէ որ փախչես ինձանից ։

272 Հով այվանում 7) քընել ես ,
Սալամ 8) կաքաւ բռնել ես ,
Վարդի ջուրը կաթաց վրէդ ,
Իմացար թէ քրանել ես ։

273 Ա՛խչի տունը լվացիր ,
Եարդ մեռաւ չը լացիր ,
Թաժայ 9) եարըդ տուն եկաւ
Ճերմակ գեօքսըդ 10) բացիր ։

274 Ղուշ ըլնեմ գամ ձեր բաղը ,
Ուտեմ ձեր հացն ու աղը ,
Աստուած սիրես մի՛ պահի
Ինձանից խօսքի սաղը ։

275 Մեծ արտումը զուշ կընի ,
Ցորտ աղբուրին թուշ կընի,
Եարը եարին տեսնալով
Գիւլը աչըմիշ կընի ։

276 Զատկէն ասել եմ քեզ «Նա՛ր»,
Բերել եմ օսկէ քեամար ,
Քու աղբօր հէրն անիծած
Քեզ կուզէ եադի 11) համար ։

277 Զուր ա գալիս լաի տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն ,
Հըրէս եկաւ իմ եարը
Թուխ գդակը թափ տալէն ։

278 Կայնե դուռը դողըմ ա ,
Սապաֆի պէս շողըմ ա ,
Ո՛չ ղուղաբը տալըմ ա ,
Ինձ էլ ձեռաց թողըմ ա ։

---

1) Աշխարհ · — 2) Գոգնոց · — 3) Կարմիր · — 4) Զորիցն եմ · — 5) Վարդագոյն · — 6) Նայի՛ր · — 7) Հով տեղ ծառներով չրջապատած · — 8) Ողջ · — 9) Նոր · — 10) Կուրծք · — 11) Օտար , ուրիշ ։

279 Բաղի բոլորը պատ ա,
Մէ խօսքըդ ընձի չատ ա,
Ատածու առաջին կտրինք
Մինչեւ համբարձումի վագա 1)։

280 Կը կաղնեմ կէտին քարին,
Գիր կը գրեմ նաղլու եարին,
Հա՛մ կը գրեմ հա՛մ կը ճնշեմ,
Ազու կարի ըստէնց ատրին։

281 Էրեւանը գուքեան գուքեան
Ճերմակ չիշու ըստաքան 2),
Ես իմ եարը սիրեցի,
Դիւշմընների ստրաքան։

282 Սարի սիրուն նարդիզ եմ,
Ծուտի 3) եմ էրկէն վիրզ եմ,
Շատ ջահիլների միջից
Սրտով սիրածիս կ'ուզեմ։

283 Ախով սիրտս վառեցաւ,
Ալ արուն սառեցաւ,
Անխիղճ մի ըլլի իմ եար
Աղ աչքերս պաղեցաւ։

284 Մի բարձ եմ արել ի՛մն ա,
Մինն էլ եմ արել ի՛մն ա,
Գեանջու քարվան գալիս ա,
Միջի թաւադրն 4) ի՛մն ա։

285 Ընկած տեղից վերցրո՛ւ,
Ինձ ծտի պէս թռցրո՛ւ,
Բոնումդ ձուաձեղ արա՛,
Մի քե՛օլկա տեղ 5) կերցրու։

286 Հանդէն գաս գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես,
Ընձէն գիւման 6) եար թռնես,
Բէմուրվաթ 7) հողը մտնես։

287 Կը կաղնեմ ռոնա քարին,
Կը եշեմ Բաքվայ ստրին,
Ա՛յ Բաքուայ խաղայիններ,
Օղարկեցէք թէլլու 8) եարին։

288 Կայներ ես կաժ 9) կը մտնես,
Արեգակի նման ես,
Իջի ըստուց դէն գընայ
Շատ մարդ գլխուց կը հանես։

289 Լա՛ւ աղջիկ ես քուր չ'ունես,
Հագիդ կուռուչկայ 10) չունես,
Գընա՛, կորի՛ սեւ երես
Յերեսիդ ապուռ չ'ունես։

290 Ատուները համամ է 11),
Ենգի բիլուր շամամ է,
Ես է՛ն աղջըկան կ'առնեմ,
Որի անունը Թամամ է։

291 Գեաբն եմ գըրալ կաշի,
Աչքս բաղալ կը եշի,
Զերան 12) իմ եարի կեալը
Հալալ կէտա կը մաշի։

292 Միթկալ 13) չապիկ կարեր եմ,
Դոշին 14) կոճակ չարեր եմ,
Հինը մաքէս հաներ եմ
Ֆեզի թաժայ ճարեր եմ։

293 Ես աղջիկ եմ գիւլ կ'ուզեմ,
Ճակատս դեղին փուլ 15) կ'ուզեմ,
Էն էլ մէկ մէկ հատ օսկի,
Էն էլ ես բէտ բէտ 16) կ'ուզեմ։

294 Ա՛յ օրն օրն ծաղիկ,
Կարմիր ու տորն ծաղիկ,
Տարէնը մի հետ կը գաս,
Դատ քեզ օրն ա՛յ ծաղիկ։

---

1) Ժամանակամիջոց · — 2) Բաժակ · — 3) Թութակ · — 4) Ազնըւական, իշխան · 5) Հոլ տեղ · — 6) Յուսալի · — 7) Նպատակից զըրկուած · — 8) Վայելչահասակ · — 9) Մանելու գործիք, որով թել են պատրաստում ձեռքով ոլորելով · — 10) Կանացի կարճ բաճկոն · — 11) Բաղանիք · — 12) Մինչեւ · — 13) Կտաւ · — 14) Կուրծք · — 15) Փող · — 16) Մեծ մեծ։

295 Ծառի գլխին սու ղչեր 1),
Դեռ չի հասել մեր նշեր.
Ախչի՛, հայլին ա՛ռ, իշկա՛,
Ի՛նչ կարմիր ա քո թշեր։

296 Կաքաւը սուլուլ 2) կը տայ,
Կնճիթը տիւրուր կը տայ,
Հուր 3) վոր մին հար չի ունի
Օնքերը իւրուր 4) կը տայ։

297 Զէյրան ընկել է ձորը,
Խարար ղրկեցէք մօրը,
Կամ թո՛ղ ձագին ազատէ,
Կամ սուրը խրէ փորը։

298 Ախչի՛, գոնից դո՛ւրս արի,
Ինձ չիկին 5) թառլիկ 6) կարի,
Երբ որ գլուխըս գընեմ,
Ուրախացի՛, մա՛ն արի։

299 Բուխէրիկը 7) վառել ա,
Աֆքեարըդ ինձ առել ա,
Քան որ քեզի սիրել եմ
Ուշք ու միտքըս գառել ա։

300 Երկինքը կամար կապեց,
Սու մազերըս սպիտակեց,
Փիս մարդի սառ խօսքերը
Քեզ ինձանից չուտ ջոկեց։

301 Քուրդը քոչից՝ առ՛ն չ՚ունի,
Սիրաս բըլաւ՝ առ՛ն չ՚ունի,
Սիրա ըսածդը չիշայ 8) է
Որ կոտրա՛ւ էլ խէր չ՚ունի,

302 Ինչ որ ասեմ չի լսի,
Կայնե գուռը կը մոսի,
Գընայ առա՛ւ ախմախին,
Օրը հինգ գան 9) կը գոսի 10)։

303 Նալն 11) ու մեխը կրակումը,
Սալան ճոթը մկրատումը,
Սէրը սիրածն հանողին,
Թաքը թխոցի գրատումը։

304 Անձրեւ արի՛՝ գեօլ արա՛,
Ղըսմաթներըս լոլ արա՛,
Նարըս՝ որ կոնից կ՚ուզես
Դիպա մեր տուն թօլ արա՛ 12)։

305 Փող ես ուզում քեզ փող տամ,
Ոսկի տամ, ո՛չ թէ հող տամ,
Թէ դրան էլ ղայիլ 13) չես,
Հոգիս հանեմ քեզ փոխ տամ։

306 Սուրբ Կարապետ ուխտ կանեմ,
Ծամերըս ջուխտ-ջուխտ կ՚անեմ
Իմանամ ինձ չես առնի
Կերթամ մօլլին թուղթ կանեմ։

307 Կանաչ են ա՛խ սար ու ձոր,
Զէնըս բարակ, սիրտըս խոր,
Հոգիս էլ տամ չես լսիլ,
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր։

308 Ա՛չա՛ք 14) ե՞փ պիտի լինի,
Որ բուռ 15) անեմ իմ հարի,
Կանաչ կարմիրը կապած
Աչխար թողամ զարմացած։

309 Արեւը սարին երան 16)
Ամպուռնը 17) քարին երան,
Մին թեւաւոր ղուշ պատի
Իմ սիրած հարին երան։

310 Պատին մէջը պատ չիլլի,
Գեղին մէջը սար չիլլի,
Ախչի՛, խելքըդ քեզ ժողվէ
Քու ըսածդ լաւ չիլլի։

---

1) Թռչուններ. — 2) Պատյտ. — 3) Ով որ. — 4) Իրար. — 5) Մի տեսակ կերպաս. — 6) Գլխարկ. — 7) Վառարան. — 8) Ապակի. — 9) Անգամ. — 10) Բարկանայ. — 11) Պայտ. — 12) Դարձրու. — 13) Ցօժար. — 14) Արգեօք. — 15) Գուլպայ. — 16) Վրայ. — 17) Ամպուռ։

311 Գլուխըս դըրել եմ քարին
Սիրտըս լիք ա արին,
Եարիս էփած մայլամը 1)
Դըրէք իմ սըրտի եարին։

312 Մեռնիմ քու թըշի խալին,
Հագինդ կարմիր ալ վալին,
Հօրըդ ոչխին 2) մի՛ եշէ,
Գալէ՛ ինձ ե՛կ էս տարին։

313 Գնա՛, ոչխարը կըթի՛,
Օճառքի 3) տակ մի՛ փըթի,
Քիրըս զարկեմ ձեր տունը
Մի էրկու փինջան 4) կաթի։

314 Ղարսայ քիրդը փըլեր ա,
Եարս տակին քներ ա,
Աբէ՛ր օգնութեան հասիր
Իմ օրը խաւարեր ա։

315 Զին գուռը կապած տեսայ,
Կրակը վառած տեսայ,
Եարըս գոնիցը անցաւ
Զաքմանը 5) պատռած տեսայ։

316 Դէզ եմ դըրել հաւան չեմ,
Ես իմ գլխին գլուան 6) չեմ,
Ինձ օխչարամորթ անէք,
Ես էն տըղին հաւան չեմ։

317 Արաղ նըզանում գեամին 7),
Գեօքսիս ա տալիս քամին,
Ես մի զարիբ ծա՛ն ունեմ
Հասրաթ 8) եմ ծոցի համին։

318 Քնացել ես եկալ ես,
Ցըրեխներդ կոկալ ես,
Ձեռիդ ճպատին 9) մատաղ
Գառնը մորան ճօկալ ես։

319 Եթում 10) եմ էր-մէր չունիմ,
Ուրիշի հետ սէր չ'ունիմ,
Քեզնից գիւման եար չ'ունիմ,
Գլխիս ուրիշ տէր չ'ունեմ։

320 Կապոյտ քիրաճած 11) տներ,
Մէջը կայ օսկի սներ,
Սարէն թափան աղջկներ,
Կ'լմանին կատղած շներ։

321 Իմ եարը էլաւ գընաց,
Դարին դէմ դէմ առաւ՝ մընաց,
Հալալ թողութիւն չ'էրի,
Որտիս դաղ եղաւ գընաց։

322 Ընկել եմ ա՛խ սարէ սար,
Դաման չ'ունիմ՝ ո՛չ մի ճար,
Ուզում եմ գալ քու ոտքը
Առաջըս ծով սար է սար։

323 Անհանգիստ ծիծեռնակ ես,
Դու քո ջանին կրակ ես,
Շատ էլ մի հպարտացի
Մէ ծառայող մշակ ես։

324 Էլի՛, կանի աղաչա՛,
Պապու ծառներ կանաչ ա,
Մէկն ա հըզի մէկ թզի,
Մէկ Աստուած պահա՛ քըզի։

325 Աղջիկը քնաց կալաւը,
Պապղի տուաւ հալաւը
Օգից որ յեա եշի,
Նշանածն ընկաւ կոլաւը։

326 Կայնել ես նաւի վըրէն,
Ջինարի՛ ծառի վըրէն,
Կարմիր ֆատդ թեքել ես,
Շէկլիկ քեանքուլիդ վըրէն։

327 Ես քու սիրուդ վառել եմ,
Վաճառական դառել եմ,
Քեզ թանկագին առել եմ,
Սիրունա ո՞նց էժան ծախեմ։

328 Իմ եարն ինձ եար պըտի,
Ձեռումը ֆանար 12) պըտի,
Իմ եարի կանգնած տեղը
Մէկ չինարի ծառ պըտի։

---

1) Դեղ։ — 2) Բերան։ — 3) Առատաղ։ — 4) Բաժակ։ — 5) Կոչիկ։ — 6) Դատաստան։ — 7) Նաւ։ — 8) Կարօտ։ — 9) Ճիպոտ։ — 10) Որբ։ — 11) Սուաղած։ — Լապտեր։

329 Ես մի պուճուրուն ունեմ,
Մէջը ոսկի սուն ունեմ,
Շան տղա՛յ, չաստ մի՛ խօսա,
Քեզ պէս օխտոր չուն ունեմ։

330 Ա՛յ տղայ էգ ես մէտ ես,
Խանչալը մէջքդ նետես,
Դու դիտես տղամարդ ես,
Ծըմակի փթուկ փետ ես։

331 Քանի դուրպաթ 1) եմ ընկեր,
Մէջտեղս գոտին չեմ քակեր,
Խարտո՛ւկ անուշ, անթառամ,
Քեզնից զատ կինն է հարամ։

332 Խօրթեմ 2) իմ դուշմնի գլուխը,
Զը կարեր մըր տան մուխը,
Դիլաք 3) կէնիմ Աստըծուց
Օր կարի ուր օղջի ծուխը։

333 Բարեկենդանը մօտ ա,
Իմ սիրտը շատ գարդոտ ա,
Աստուած մեր քան յաջող ա,
Ետրըս ընձի կարօտ ա։

334 Ախչի՛, դու սիրուն բան ես,
Ընձի ձեր տունը տանես,
Գինիրը մօտըդ պահես
Առաւօտը դուրս անես։

335 Հէրանցս դուռը դուզ է,
Հէրըս բաշլըզ շատ կուզէ,
Հարուր մանէթին աչէ,
Պարտօնը 4) թեւդ քաշէ։

336 Գուլում գուլում գուլաստր,
Բուրդ կը մանեմ հոլաստր,
Էս չէնուսը 5) երկու հարս կայ
Մինը ֆանց մինը եաս ա։

337 Երկնքի կանաչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանաչ կարմիր,
Լերդս ու թոքս չորացաւ,
Սար ու ձոր կանաչ կարմիր։

338 Տեսայ ճամբին Գէորգ դուշ,
Ուզեմ տեսնեմ թ՛ի՞մ անուշ,
Ելայ, որ ես քեզ մօտ գամ
Ոտս ծակեց մի մեծ փուշ։

339 Զօլում քրդեր մէկ էղած,
Զորս կողերս են բոլորած,
Զօրութենով 6) մըր տաւար
Թալնեցին էղած չ'էղած։

340 Ա՛խ, չաչխուն իմ ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ, սիրտս կերի,
Տղայ, սուս կաց, ի՞նչ պէտք երգ
Կիգա՛մ, կիգա՛մ իմ տղերք։

341 Ղամիշ եմ զալխայ միջին,
Աբրիշում զալխայ 7) միջին,
Ես մի պուճուր եար ունեմ
Ուսումաթ 8) խալխայ միջին։

342 Աբո՛ւ 9) ջան ես քեզ մեռնեմ,
Թո՛ղ տու, որ նրան սիրեմ,
Սիրել եմ դուզ մէկ տարի,
Կ'ուզեմ, որ նրան պատնեմ։

343 Լուսինն էլաւ կամարից,
Բռնէ՛ք եարիս քամարից,
Լեզուովս արիւն առնեմ
Էն բուխախի դամարից 10)։

344 Համբարձում ա երգ կ'ասեն,
Ջան-գիւլում ա երգ կ'ասեն,
Մի խօսք էլ ինձի տուէք
Էրած սիրտս ուրախ արէք։

345 Խօսքդ տալը էլ ի՞նչ էր,
Սիրտըս այրելն էլ ի՞նչ էր,
Զուխտ տարի ինձ տանջեցիր
Էլ բաց թողալդ ի՞նչ էր։

346 Սրտի խոր տէքը,
Կողքայ տոլազ 11) գեղդէքը
Նստել են այգինները
Կանչում են լաւ զայդէքը 12)։

---

1) Պանդուխտ. — 2) Թաղեմ. — 3) Աղաչանք. — 4) Վերարկու. — 5) Գիւղ. — 6) Ուժով. — 7) Մեքենայ. — 8) Ուսեալ. — 9) Հայր. — 10) Ջիղ, երակ. — 11) Դատարկաչրջիկ երիտասարդներ. — 12) Եղանակ, երգ։

347 Էն եարը հո՞ր ա, տանը չի,
Վարած արտը կնանչի,
Էն եարը մին քիւր ունի
Կընկնի տարերը կը կանչի։

348 Էս գիշեր լուսը տեսայ,
Իմ եարըս դուռը տեսայ,
Էլեր էր մերին կ'երթար
Կացինն ուսուզը 1) տեսայ։

349 Ժամի դուռը մաս մաս քար,
Ես չեմ առնի զարիպ եար,
Թեւերիս բերան օյայ
Եարըս թաւադի բոյ ա։

350 Թրոի՛, թրոի՛, եղբընիկ,
Աւազանի ծիծրոնիկ,
Խաչ պատուհան կուակեր է
Աւազանի ջուր խըմէ։

351 Երկնից կամար օնքերըդ,
Ինձէն մի կարէ սէրըդ,
Համ տուտին եմ համ լաչին 2),
Ես կարօտ եմ քո պաչին։

352 Ծատին տակը հէլ ունիմ,
Հում ապրէշում թել ունիմ,
Ծո՛ մանչ, տավարը վար բէ՝
Ես քու վըրադ սէր ունիմ։

353 Ալագեազ ձիւն ա բռնել,
Եարըս վատ գիւն ա բռնել,
Էլայ դուզը, որ նայեմ
Աստծն է էն զըմիշել 3)։

354 Մարալ մարալ ման արի,
Ջէյրան ջէյրան տո՛ւն արի,
Թէ եար ես առել ընձի
Էլ մի՛ մընա, տո՛ւն արի։

355 Էլեր ես փատ կը տաշես,
Ալամ աշխարքին կաշես,
Ինձի սէր էրիր չ'առար,
Ալ ալխալուդդ չը մաշես։

356 Կայներ ես վանքայ հովին,
Քամին տայ դոշիդ մովին 4),
Էրնէկ քո ծոց քնողին՝
Մէջ ջուխտ չամամ բռնողին։

357 Աղլուխըս լուա՛, զարկի,
Ախչի՛, դու ծաղկին պարկի,
Հերիք հոգեհան անես
Կամ ինձ սիրի կա՛մ թարկի։

358 Ստանպոլ բոլոր մերի,
Բոլորը կըլլի դերի,
Ես իմ եարը կը ճանչեմ
Օսկի մազերը կ'երերի։

359 Կանգնել ես մեր տան քամակը 5),
Խօսքըդ դարձրել ես դանակ,
Ախչի՛, եդ կա՛ց, բանըդ տե՛ս,
Որ չը քցեմ քեզ իմ տակ։

360 Քարփի գլխին ունիմ տուն,
Մէջ տնկել եմ էրկու սուն,
Դարդս էնքան չա՛ որ
Գշերները չ'ունիմ քուն։

361 Ինի մանչուն 6) ֆասը ալ է
Դառնայ, դառնայ ինձ կաշէ,
Ինձէն քեզի փայդայ 7) չ'կայ,
Գնա՛, գնա, ճամբադ աշէ։

362 Էս բակը բակ գլմանիր,
Գլխունը թագ գլմանիր,
Իմ եարը դռնէն անցաւ
Իրմովը բեակ 8) գլմանիր։

363 Վարդ ա քաղել իմ եարը,
Տեսել ա իմ մեծ մարը,
Խօսքը խօսքի ա քցել
Խօսքը չի առել անճարը։

364 Օրերս դառել ա խաւար,
Ծնուել եմ եարիս համար,
Մեռնի իմ եարիս մէրը
Նայ ա տուել չար խաբար։

---

1) Ուսին։ — 2) Կանացի բարակ գլխակապ։ — 3) Խնայել։ — 4) Դիպակ։ — 5) Ետեւ։ — 6) Երեխայ։ — 7) Օգուտ։ — 8) Բեկ։

365 Ղարաֆիլը գեղին է ,
Իմ ուղածը գեղէն է,
Կ'ուզէք հարցրէք իմացէք
Մեր գրկցանց 1) աղէն է ։

366 Ինձ զատեցին մեր տանից ,
Ազգական-բարեկամից,
Նոր աշխարք են ինձ տանում
Հեռու եմ էլից-գիւնից ։

367 Լորը թռաւ էս հանդից,
Կոտրաւ շաքարը զանդից,
Աչըդ չի, աչըդ դարձայ
Գրնացած եարի դարդից ։

368 Լուսնեակը բոլորել է
Ամպի մէջ գլորել է,
Ախչի՛, քու ծոցիդ մէջը
Ծծերդ կլորել է ։

369 Ջաղացիս դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Հըրէս էկաւ իմ եարը
Գոտիկը լիքը վարդ ա ։

370 Սեւ ամպերը սապում չէ,
Սիպտակ եայլուղ 2) սապում չէ,
Նօթը տարի ալ հագնեմ
Սիրտս սեւ է սապում չէ ։

371 Ախչի՛, ախչի՛ ի՞նչ ըլլիս
Կատունների պոչ ըլլիս,
Ազամանի թաս ըլլիս,
Քաշքայ հօրըս հարս ըլլիս ։

372 Սիրած աղջըկայ աչքը,
Խօսքըն ալ տուել հէրը,
Օխտը տարի սիրեցի,
Չը տուեց յեսաֆուր մէրը ։

373 Քշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքս գետ կը չինեմ,
Արագ, ծէգը ջրիդ չ'ասած
Իմ սեւ գարդ քեզ կը բերեմ ։

374 Երեւան ասի եարըս,
Բաղդատ խուրմասի եարըս,
Շաքի, Շիրուան, Շամախի,
Թաւրիզ ազասի եարըս ։

375 Լուսնեակ էրգան գիշեր,
Գեր օնքվի կարմիր թշեր,
Ախչի՛ ախբօրդ արեւը սիրես
Դասատուր 3) տուր գամ աս գիշեր ։

376 Էրեւանու բերին նուռ,
Բերին թափին ժամին դուռ,
Ժամի դռնէն դուս կուգայ,
Շանդանի 4) պէս լուս կուտայ ։

377 Ամպերն ընկան Մասխին,
Կարօտ մնացի իմ եարին
Ատոծ սիրես էրուածխս
Ջուզաբ բեր էկող տարին ։

378 Ճաղացի դուռը չիման,
Ախպօրը չըկայ իման,
Քրոջը կաշին տարան,
Մէ պէրան չ'ասաւ «եամա՛ն» ։

379 Աղջի՛ աղջի համ օնես,
Ճըրիկ-ճըրիկ ծամ օնես,
Քա մօր աչքերը վեր դառնայ,
Թէ ինձ կեալի կամ օնես ։

380 Ա՛յ տղայ արի՛, գընա՛,
Շապիկդ տո՛ւր ու գընա՛,
Լուսամ լուսամ չ'խաբկուի
Վարդաջըրեմ խաբկուի ։

381 Ես աս գեղին ցորնէն եմ,
Խաս բաղու խնձորէն եմ,
Խնձոր էղէ՛ հասեր եմ,
Բիւլբիւլի պէս խօսեր եմ ։

382 Իմ հարսըս հէնց էս տանն է,
Ընտեղ նստած կար կ'անէ,
Բաղդադու սեւ շալիցը
Ընձի չուխայ կը կարէ ։

---

1) Դրկից, հարեւան · — 2) Թաշկինակ · — 3) ա. Իրաւունք բ. արձակուրդ · — 4) Աշտանակ ։

383 Խնամի խոշ 1) ես էկել,
Դարդակ ու բոշ ես էկել,
Երկու բուլուճ 2) ես լերել,
Էն էլ ճամբան ես կերել։

384 Սիրուն ես ծաղկի նման,
Կապուտ ես լեղկի նման,
Բիրդան 3) թռար ձեռքից
Թեւաւոր հաւքի 4) նման։

385 Ճամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ,
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թո՛ղ տեսնի աշխարհ ալամ։

386 Մեր տան տակը վար կ՚անեմ,
Զալ քչեղակին 5) քար կ՚անեմ,
Վեր իմ սիրածին ինձ տան,
Պելուխիանը 6) թարդ կ՚անեմ։

387 Քաղքի վէչը միկիտան,
Քօխվի ախչիկն ինձի տան,
Իմ անունը Զարնչան,
Մատնեքըս տամ քեզ նշան։

388 Երկընուց մատնի մ՚իջաւ,
Մատիս վրայ խաչուեցաւ,
Ես իմ եարը քիամ գիտէի,
Ճէվահիր 7) քար բացուեցաւ։

389 Աչքերդ բիլոր բիլոր,
Ման կը գաս իմ չորս բոլոր,
Բիլոր աչքերիդ մեռնիմ
Մի աչի խոլոր մոլոր։

390 Կասես չողք քարին ընկաւ,
Կրակն սրտիս մէջ ընկաւ,
Կամար ունքից թուխ աչքից
Ցաւն ջիւան 8) ջանիս ընկաւ։

391 Սրի մի փաթ պար խաղանք,
Տընկոզ 9) Ջանք չը կաղանք,
Հարսանիքիդ ալուրը
Մուղնու ըխտից վաղ աղանք։

392 Լամպի չիշան կը ճնկայ,
Կլորայ ծոցդ ընկայ,
Սիպեխը զոխ է դառել։
Իմ եարը զոխ է դառել։

393 Շուն ա հաչում քուչումը,
Եարիս ոտը բուճումը,
Շուն չան ոլդու վատ խօսքը
Ինձ թողել ա քուչումը։

394 Աղուէս դարը պլել ա,
Եարս տակը քընել ա
Զէն տուի ձէնս չ՚առաւ
Էդ ի՛նչ անուշ քընել ա։

395 Խաղ կ՚ասեմ խաղիս գլխին,
Իմ հէրանց բաղի գլխին,
Քաչալն 10) իրան դեղ կ՚անի,
Հողը տամ կաղի գլխին։

396 Էս օր գութանը մերն ա,
Մաճ բռնողը իմ հէրն ա,
Եզնարած չէկ չէկ ողէն
Ալամ գիտէ ի՛մ աէրն ա։

397 Դամբուրիս կոթը քերեմ,
Կայնի քեզ գինի բերեմ,
Ձեռքըս ճառվըդ տանեմ,
Գնացած խելքըդ բերեմ։

398 Կնձիկ-ճնձիկ մի հեղճ եար,
Կէծ ա ընկել 11) իմ հեղճ եար,
Գնացի, որ հեռը խօսեմ,
Տեսայ քընել ա իմ եար։

---

1) Բարով։ — 2) Խմորեղէն։ բուլքի։ — 3) Ցանկարծ։ — 4) Թըռչուն։ — 5) Կաչաղակ։ — 6) Գժութիւն։ — 7) Թանկագին ակն։ — 8) Երիտասարդ։ — 9) Մէջքը ծռած։ — 10) Ճաղատ։ — 11) Հարբել է։

399 Եարս նստել ա գոչակին,
Ուշք ու միտքը փէշակին 1).
Խըմել ա նուռն գինին,
Հոտ կանի մանուշակին։

400 Սարերին թերթիփ ձիւնը,
Բաղերին ավլան հունը,
Իմ եարը ումին խօսք ասեց
Կտարեց սրտես սիւնը։

401 Խոչավանքի թվանքը,
Կըլմանի կարմիր վանքը,
Կարմիր վանքի ղշերը,
Սիրուն եարիս թշերը։

402 Դամբուլի 2) կոթը փթի,
Օխտը կով ունեմ կթի,
Ո՛վ որ իմ սիրածն առնի
Հոգին պժոխքին փթի։

403 Ես կարծախու փոսէն եմ,
Գգտաշ սարի փսէն եմ,
Մուժտայ 3) տարէք քու մօրը
Ես քու նանու փեսէն եմ։

404 Սանդ կը թակեմ հա՛խ ա,
Ձմոչկը վոտնիս լախ ա 4),
Ա՛յ տղայ չատ մի՛ խօսա,
Զալ 5) մուկը ուէխտգ կախ ա։

405 Տանս տակից ջուր բղխար,
Եարըս սիրտըս լուանար,
Եարիս տուած եարէքը 6)
Իրան ձեռքով լուանար։

406 Գիւլն եմ փըռել ես դաշին 6),
Ի՞նչ եմ անում անտաշին,
Ես սիրել եմ ես կ'առնեմ
Լէն երես զալամ դաշին։

407 Սրտիս դարդերը խոր ա,
Ծունը մերը չի՛, նոր ա,
Բէֆասըզ մարդի ձեռից
Հուրն յաւիտեան ես կորայ։

408 Գեղէն էլլես գեղ մտնիս,
Իմ քրցած տեղը մտնիս,
Ինձէն դայրի 8) եար բռնես,
Բէմուրատ 9) հոգը մտնիս։

409 Մեր չարտազը բանցո է,
Սիրած եարը քաղցը է,
Փեղէք 10) հօրը հարցնենք,
Թէ չը տուեց փախցնենք։

410 Գնացի հանդը կըրակի,
Ոտքըս գիպաւ փըռանգի.
Շան գեադին արի՛ թաղի.
Ղըրկեցի լափըսարակի։

411 Ես ի՞նչ կանեմ ամակը,
Ըստացել եմ նամակը,
Բաղդիցըս դանգատ կանեմ
Խատար է արեգակը։

412 Աշխարքի մալ ինչ կ'անեմ,
Արի՛ քեզ սարը հանեմ,
Թէ թեւերըս բեզարեց 11)
Գըլխիս վըրայ կը տանեմ։

413 Իմ սիրտըս տաղ մի՛ անի,
Ջիգեարիս աղ մի՛ անի,
Ձեր դրանը, ա՛յ աղջիկ,
Ինձի տաւթաղ 12) մի՛ անի։

414 Կիրակի էլ պաս կըլլի՞,
Արծթէ էլ թաս կըլլի՞
Վարդապե՛տ, որթիդ մեռնի՛
Սիրածն էլ չ'հաս կըլլի՞։

---

1) Արհեստ։ — 2) Սալորենի։ — 3) Խաբար։ — 4) Մեծ է։ — 5) Սպիտակ։ — 6) Վէրքերը։ — 7) Թամբի քարձր մասը։ — 8) Բացի։ 9) Անմուրատ։ — 10) Եկէք գնա՛նք։ — 11) Յոգնեց։ — 12) Բանտարկեալ։

415 Գլօխս թուխուն դէմ կըտամ,
Թուխուն չէվերը ետ կըտամ,
Հով վէր սէրը սիրածան հանի
Սրտին քարփաթուն 1) եր կը տամ։

416 Օչխարն էրեր եմ դօշը,
Պիճիկի 2) լեռլուն խօշ է,
Ես մեռնիմ պզտի եարին,
Ամանաթ 3) եարը լոշ է։

417 Դէմէն ձիաւոր գընաց,
Նալը 4) պլպլաց գընաց,
Ամենքին բարեւ առաց,
Ինձի վառեց ու գընաց

418 Գութանը վարի փոռին,
Շողն է զարկեւ ակօսին,
Կարմիր խնձոր դօշ էնեմ,
Ղրկեմ իմ նանի փէսին։

419 Փափախդ ծուռ ես գըրել,
Գօտիկդ նուռ ես գըրել,
Ծոցումըդ գեղին ոսկի
Դու էրկու բուռ ես գըրել։

420 Իմ աղբէր ծառի տակին,
Սաղմոսը կոան տակին,
Սաղմոսը գիր ա առել,
Լեզուն բիւլբիւլ ա դառել։

421 Սրեւն առաւ գերանին
Ես մեռնիմ Աւետրանին,
Ջուխտ աղաւնեկ դուրս ելան
Կանաչ խոտը բերանին։

422 Սխչի՛ անուդ Էլիսայ,
Գլխիդ կարպինկէն 5) խաս ա,
Թուշդ դէս արա՛ պաչեմ,
Գընա՛ քո նանին ասա՛։

423 Կաղնալ ես կտրիս միջին,
Քաքուլըդ թաքնիս միջին,
Թէ ինձ օգես ես վազես
Գիւլլան տայ սրտիդ միջին։

424 Էս տարէն մէկ քօչ 6) անցաւ,
Քօչը տուաւ մէջ անցաւ,
Սիրտըս մէկ կրակ ընկաւ,
Ո՛չ վառաւ ու ո՛չ հանգաւ։

425 Սարերը նուռնուշ գըլլի,
Վարդին մէջը փուշ գըլլի,
Գըլուխըս եարիս ծնկին
Քունըս չատ անուշ գըլլի։

426 Ոսկի խանջալիդ մեռնեմ,
Արծաթ ու բուզ 7) վրէդ քաշեմ
Հեռու կանչած առջեւիցդ
Զուր ե՞րբ, ասա՛, յ եզ աշեմ 8)։

427 Գութանը վարած տեսայ,
Հերկերը վարած տեսայ,
Ապուռդ գետինը մանի,
Սիրածդ տարած տեսայ։

428 Ինձի տար քու հէրանց բաղ,
Ձեր վարդերին դրել չաղ,
Հէրդ ընձի ուզէ քեզի՝
Ասարծուն կ'անեմ մատաղ։

429 Սխչի՛ անուդ Մայի,
Ճակատըդ բոլոր չահի 9),
Թուշդ դէս արա՛ պաչեմ
Ատուած ախպէրդ պահի՛։

430 Խախալը 10) ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել,
Դու գիտես եար եմ ասել
Խաբի՛լ ու ման եմ ածել։

431 Ա՛յ տղայ, տվարած 11) տղայ,
Կոճակնին չարած տղայ,
Իմ հէր քեզ աղջիկ չի՛ տալ
Սիրտը խշարած 12) տղայ։

432 Փնացել ես օրաւ ե՛կ,
Նաղլբխըդ խիարով ե՛կ,
Մեր տիւռնը 13) դալմաղալ ա,
Շուտ տո՛ 14), աղբըրաւ ե՛կ։

---

1) Մեխ հանելու գործիք. — 2) Փոքր. — 3) Պահ տուած իր. — 4) Սմբակ. 5) Գլխարկ. — 6) Խումբ, քարաւան. — 7) Ոսկեթել. — 8) Նայեմ. — 9) Փող (ոսկէ). — 10) Զամբիւղ, սապատ. — 11) Խաշնարած. — 12) Եռեկած. — 13) Դուռն. — 14) Շուտ տո՛ւր։

433 Մուղնուայ ջուրըն սարն է,
Մուղնի էրթողն իմ եարն է,
Թող էրթայ մուրազն առնէ,
Եա դառնայ սիրածն առնէ։

434 Ղչե՛ր թեւերըդ բացէ՛ք,
Ազիզիս քեօլկա արէ՛ք,
Բարակ քամին որ փչի
Դուք հեար նանիկ արէ՛ք։

435 Աղջիկն էկեր պար կ'ուզէ,
Մարդբիտանները չար կ'ուզէ,
Հըլը 1) պագըմ չը առած
Ինձէն անգին քար կ'ուզէ։

436 Սարի տակը մշոշ ա,
Իմ եարը բանկլի 2) զուշ ա,
Էդ ո՞վ ա ասում գէշ ա,
Մեղրից ու շաքրից անուշ ա։

437 Աղջիկ աղջիկ համ օնիս,
Զորս աւանի ժամ օնիս,
Քո հէր քո մէր շատ ապրի
Ինձ գալի դու կամ օնիս։

438 Ձեր բաղից խնձոր քաղեմ,
Հօրըդ գլուխը թաղեմ,
Քեզ մանհան չեմ անել
Աչխարքում քանի տաղ եմ։

439 Էլայ գումբէթի 3) վըրէն,
Նայեցի ներքի վըրէն,
Տասնըերկըանոց, չորանոց,
Է՛ն էլ գոլվաթի 4) վըրէն։

440 Սամ սըրմալի ալ փուշի,
Ախչի՛ սիրտըս կը մաշի,
Քու տուած անուշ պագիկը
Չեմ տայ հազար զուրուշի 5)։

441 Ախչի՛, ի՞նչ էր պիլակըդ,
Ոխով կոչկով պիլէակըդ,
Մի՛ բանա ճեմակ գէօկսըդ
Ինձի կէփէ կըրակըդ։

442 Ախչի՛, ախչի՛ դէտ քընայ,
Առաջքաւդ եա քընայ,
Խուռահատին քամին փչի,
Գիւլգաղ չալըտ եա քընայ։

443 Սարը կոխել ա դուման,
Գդակդ ածի մի՛ թուման,
Սէրըդ սրտես մէջն ընկաւ
Ատուած վկայ անդուման 6)։

444 Արեւը բոլորել ա,
Լուսնեակն ելել նորել ա,
Սիրունի խաթեր համար
Քունն աչքիցս կորել ա։

445 Զարտախին 7) թան եմ ածալ,
Բոյաւըդ մըն եմ ածալ,
Խափալ եմ թէ քե եմ դալու
Եաղլախըդ փոլ եմ ածալ։

446 Վարթաւորը գալիս ա,
Ծաղիկըս հնձելիս ա,
Վարդեւորի ջուր աղջի՛կ
Ատաղ 8) ծըլվըլալիս ա։

447 Ձեր տունը է՛ն քուչէն ա,
Իմ աղբէրն է՛ն գեչեն ա,
Ա՛յ տղայ, լա՛ւ գիտենա,
Սիրտս սրտիդ մէջն ա։

448 Աղբօրս անունն Աղասի,
Քիսէն լիքը աբասի,
Քիսէն խարջըդ 9) չը մընաց
Քօմմա 10) օղուրիս 11) գընաց։

---

1) Դեռ։ — 2) Պիսակաւոր։ 3) Գմբէթ։ — 4) Հարատուութիւն։ — 5) Տաճկական մանր դրամ։ — 6) Անսպասելի կերպով։ — 7) Սրահ։ — 8) Զայն։ — 9) Մխսելիք, ծախս։ — 10) Բոլոր։ — 11) Բարեհոգի։

449 Բիւլբիւլը տալին 1) վրայ,
Խնծորը ծառին վրայ,
Սիրած սիրածին տային
Զոր գեղանին քարին վրայ։

450 Կեանքիդ արեւիդ մատաղ,
Կանանչ տերեւիդ մատաղ,
Նամակով յիշել էիր,
Ղրկած բարեւիդ մատաղ։

451 Ասոր նորը նորեր է,
Իմ եարի եզը կորեր է,
Վօվ որ գանի, թո՛ղ եա տայ
Ճատիա օսկին միւժդան 2) է։

452 Թոռ կը գայ արեւ կ՚անի,
Նիշանպահ տերեւ կ՚անի,
Քուրն ախպօրը մատաղ,
Շըղաթաթաղ վար կ՚անի։

453 Ղուշը ձեր կարին թառեց,
Սէրըս սրտումըդ սառեց,
Խեղճ քեսրամին Ասլիի
Բորբոք կրակը վառեց։

454 Էջմիածին կալ ունիմ,
Բլբուլի պէս եար ունիմ,
Շան թուլայ սեխըդ գո՛ց 3),
Քե պէս եա հազար ունեմ։

455 Էս տներ պուճուր տներ,
Մէջին կար օսկէ տներ,
Սրտով սիրած եար պիտէր,
Սուն ու գերան պար պտէր։

456 Գընացի ջուրը ջըրի,
Օտքըս ընկաւ օձի լեղի,
Ի՞նչ ըսեմ հօրս ու մօրս,
Ինձ տուին զարիպ տղի,

457 Հաց կը թխեմ հուխայ ա,
Եարիս կէսը չուխայ ա,
Իմ եարն ինձ հունց կը թակի
Ինքը մին մեռնծ խոխայ ա։

458 Էս սարը բարձրը սար է,
Տակը դանջըլու 4) քար է,
Ասածըս մէկուճար է
Հոգածն էլ ըռիւքքեար 5) է։

459 Սարին տակը մընացի,
Բըկիս կապը վլացի,
Խաբար էրէք իմ եարիս
Եա հոս զարիպ մընացի։

460 Սարին էն ղոլը ձիւն է,
Էս ղոլս հաւքի 6) բուն է,
Հըրէս եկն իմ եարը
Շելակը թաւթաւ հիւն է։

461 Նաւըս ծովին մընաց,
Իմ օր ու կեանքըս գընաց,
Մեռնելն ինձ համար ոչինչ
Սիրուհիս տրտում մընաց։

462 Կայնայ քեզի խրատի,
Ախչի՛, գընա՛ կըրակի,
Կայնի բոյդ սէյր էնեմ
Ուրբաթ, շաբաթ, կիրակի։

463 Կարովը քոչ ա գընում,
Քոչը քոչումն ա գընում,
Էրնէկ տուէք էն քուրը
Օխան աղբոր մէջ ա գընում։

464 Ախչի՛ մօրէդ ուշ էլար,
Մեծցար կարմիր թուշ էղար,
Տունմ՚չունիմ օր տուն էրթանք
Քեզ առնեմ ո՞ւր էրթանք։

465 Ասլաղեազի դոշերում
Հազար ծաղիկ են բուսնում
Ընչի՞ այդպէս դու մընաս,
Ասի՛, քեզի տամ ուսում։

466 Գընացի չայը վլասք,
Սապոնն էր ոսկեջըրած,
Ի՞նչ անի հէրն ու մէրը,
Ճակատիս էս էր գըրած։

---

1) Ճիւղ. — 2) Նուէր, ընծայ. — 3) Փակի՛ր. — 4) Շղթայակապ. — 5) Գործածուած կատր. — 6) Թռչուն։

467 Ջուր կուգար ափին-ափին ,
Հա՛մ տիրացու հա՛մ դարբին ,
Ջուր չէր ջըրէ ծառերը
Գիր չէր գըրէ մատանիները ։

468 Թամքը թամքին վըրայ ,
Իւղունիկը վանքին վըրայ ,
Իմ սիպաօր ըշտե՞ 1) տեսար ,
Թագաւորին թախտի 2) վըրայ ։

469 Մառատակին ջուխտըմ զոչ ,
Մինը փնջած՝ մինը ոչ ,
Ատուած դարգեահիդ 3) մեռնեմ
Մընին կըտա՛ս՝ մընին ո՛չ ։

470 Բաղիդ մէջ կայ էրկու ծառ ,
Տղա՛յ , արի՛ ընձի տար ,
Ատրծուն մատաղ կ՚անեմ
Էրկու չիշակ , էրկու գառ ։

471 Առեւն առաւ գերանին ,
Հաւքը թառեց երանին ,
Շան տղայ չատ մի՛ խօսա
Պիղծ ես առել բերանին ։

472 Կարմիր վարդը զամով է ,
Սիրած եարը համով է ,
Ատ տեղ զօռի բան չըկայ ,
Սէրն ու սէաւդան կամով է ։

473 Ա՛յ հաւանեմ հաւանեմ ,
Մեծ կարպետի խաւան 4) եմ ,
Էլ գիտայ , ալամ գիտայ ,
Ես էն եարին հաւան չեմ ։

474 Նոր անկած բաղի բար ես ,
Ինձի թազա նուբար ես ,
Անուշիդ մեռնիմ , ջիւա՛ն ,
Աշխարքին քարեբար 5) ես ։

475 Էրկանքըս աղի վըրէն ,
Շամամը թաղի վըրէն ,
Ես մէկ թեւաւոր ղուշ եմ ,
Իմ հէրանց բաղի վըրէն ։

476 Հովը սարին նման ա ,
Տեսանք իմ եարը տանն ա ,
Իմ եարն մին քեանքիւլ ունի ,
Օսկի թելին նման ա ։

477 Կեանքիս խաղաղ օրերը ,
Ընկել են իսոր հորերը ,
Սիրտըս հոգիս վըրդովուած
Ման եմ գալիս չօլերը ։

478 Իմ եարը էլաւ գընաց ,
Դարին դէմ առաւ մընաց ,
Հալալ թողու թիւն չէրի ,
Սրտիս տաղ էղաւ մընաց ։

479 Ալ ձի հեծնեմ կը քեզի ,
Նօրղայ քշեմ կը քեզի
Գընը եարէս խաբար բեր ,
Զար պաղ չուլ կէնեմ քեզի ։

480 Սոված՝ քուչէն մա՛ն արի ,
Ես քե մարդ չեմ համարի ,
Գընա՛ հօրըդ պարտքը տո՛ւր ,
Նոր արի՛ աղջիկ սիրի՛ ։

481 Մըթնալ ա մթնաճանանչ ,
Զեր ինջի քոլը կանանչ ,
Հըրէս եկաւ իմ եարը
Բեզերը արնակալած ։

482 Ես մի կանաչ խիար եմ ,
Փոս ջանին իխթիար եմ ,
Էրթաս էրթաս յետ կայնես ,
Իմանաս՝ բէլլու եար եմ ։

483 Ղուշը կշտովս անց կացաւ ,
Թռաւ գընաց անց կացաւ ,
Էրկուսիս մէջ աեղովը
Ո՞ր սրտամեռն անց կացաւ ։

484 Ախչի՛ անուշդ Խանի
Լեչակդ քամին տանի ,
Ես տիւ մի պաղում պտենք
Իմ հէր քիւ հէրը խնամի ։

---

1) Ո՞ր տեղ · — 2) Գահ · — 3) Դատաստան · — 4) Կարպետի երեսի բուրդը · — 5) Հաւասար ։

485 Ծառս 1) հրլունը 2) հաղեղ է,
Զանս ջանիդ լայեղ 3) է,
Էլար դուռը աշեցիր,
Զիւան ումրըդ 4) մաշեցիր։

486 Բոյիդ սալվի չինարի,
Կանչում եմ մօտըս արի,
Աչխարհիս մալ ու մուլքը
Անջախ 5) քո հետ գին արի։

487 Կաքաւը կայներ է քարին,
Կտուցը լիքը նարին,
Մէ եայլուխ վարդ եմ քաղե՝
Տարէք իմ անուշ եարին։

488 Ճղացիս տիւռնը տաշած,
Եաղլըխիս քօլը քաշած,
Կեռ կեռ ունքերիդ մատաղ
Զասիդ 6) ղլամաւ քաշած։

489 Ծառաւ եմ հէչ ջուր չըկայ,
Գետերուն կամուրջ չըկայ,
Վախենամ զարիպ մեռնիմ,
Քովս հար ու մար չըկայ։

490 Էրթիկ էրթիկ բռնել ես,
Էրթկայ տակին կոնել ես,
Զէ՛ն տուր, ձէնս չ՚առա՛ր,
Մագեամ 7) ընձէն ջորի՞լ ես 8)։

491 Ծառնե՛ր՝ դուք ծիրան մի՛ք տայ,
Ճղնե՛ր՝ դուք էլ բար մի՛ք տայ,
Ես զարիպ եմ՝ զոնախ 9) եմ
Դարդերըս իրար մի՛ք տայ։

492 Ա՛յ աղայ դու աղայիր,
Զի՛ գիտում բանգզադայիր 10)։
Ուռել մի՛, պատռուել մի՛,
Դու մի ժուլիկ 11) գեաղայ իր։

493 Հոռի 12) ծառին բար չըլիլ,
Առանց քօլկայ եար չըլիլ,
Ա՛ հէր, ա՛ մէր խօսալ մի՛ք,
Խառնուած սրտին ճար չըլիլ։

494 Եարս զրկել եմ թըթի,
Ախչի՛, քու վիզը փըթի,
Ո՛ր տեղ խաղալու գընաս
Ման արի՛ եարըդ գտի։

495 Ախչի՛ մազերդ հիւվէիր,
Թուշդ էրէսիս քսէիր,
Էլլէիր վարդի ծառին
Բիւլբիւլի պէս խօսէիր։

496 Եար կանչեմ արի՛, արի՛,
Բաղումը տեսայ արի՛,
Եա՛ր, արի՛ մտի պարը,
Ես էլ ասեմ իմ խաղը։

497 Իրիկունս մթին ա,
Տաւարը չոր թրքին ա,
Հըրէս էկաւ էն եարը
Զեռքը պիւլիւր մրքին ա։

498 Կայներ եմ գալ չե՛մ կրնայ,
Լցուել եմ լալ չե՛մ կրնայ,
Ինչըդ օր գնացել ես՝
Անունդ տալ չե՛մ կրնայ։

499 Էս բակը բակ լմանի,
Գլխունը թագ լմանի,
Զան աղին անցաւ գընաց
Իրմովը բակ լմանի՛։

500 Բոստանը 13) համեմ ցանի,
Դարդըս քամին թող տանի՛,
Ա՛ր գնանք իմ եար ջան
Վարդեւորն անենք Ա՛նի։

501 Անցայ Արազն էն վաթան 14),
Փռել եմ թոփըմ քեաթան,
Ո՛վ որ իմ սիրածն առնի
Կարեմ ազիզի 15) պատան։

502 Դրան գէմին կայներ ես,
Արջկան ձեռքդ մաներ ես,
Քու դարտեր ընձի վատեց,
Ընձի տնէն հաներ ես։

---

1) Պարանոց. — 2) Ուլունք. — 3) Արժանի. — 4) Կեանք. — 5) Հապիւ. — 6) Դիտամամբ. — 7) Մի՞թէ. — 8) Հեռացել ես. — 9) Հիւր. — 10) Բեկի որդի. — 11) Սրիկայ. — 12) Ուռի. — 13) Բանջարանոց. — 14) Հայրենիք. — 15) Հարազատ։

503 Մէ եար ունիմ եար ա՛,
Եարս հէնց միտուճա՛ր ա,
Հողեմ աշխարքի գլուխը
Ծնուել ա ինձ համար ա։

504 Մեր վարդ Վարդանի մահը,
Ղըզըլբաշի մեծ ահը,
Ասած իմ ցոյց տուր ո՞ւր ա
Մեծաւր քու գարգեահը։

505 Եարը իրիգուն կաշէ,
Որ ընձի իր քովը քաշէ,
Վա՛յ անիծուի քու հէրը,
Որ քեզ պէտն ինձ չը մաշէ։

506 Նաշ են տանում մեր թաղը
Չի մընում խօսքիս սաղը,
Ասում են եարդ մեռել ա
Իսկ ես կանչում եմ հաղը։

507 Ծաղիկ ես քո ծառէն եմ
Թէբբի միջի թառէն եմ,
Տարին մէ հեա ես գալըմ,
Մակեամ քո մասխարէն 1) եմ։

508 Կարմիր աղլուխը ձեռիդ,
Ալ բինիշը կռներիդ,
Զինաւոր Սուրբ Սարգիսը
Բալքի հառնի հաւարիդ։

509 Քարը տաշի բոլրեցի,
Եարիս տեսայ՝ մոլրեցի,
Անտէր մընար է՛ն ուխտը,
Որ ես ընտեղ սիրեցի։

510 Սիրտը արնով լցրեցիր,
Կըրակով խորովեցիր,
Աչքըդ դո՛ւս գայ ա՛յ աքլոր,
Ինչ շուտ ձէնդ քցեցիր։

511 Նազլու ջանան շորորալով,
Դու էլել կ'երթաս սէյրան,
Կաքաւի պէս ոտքմիշ կ'լնես 2)
Կը նմանես եղնիկ ջէյրան։

512 Իմ եարը դուռ կը դնէր,
Գոտիկը նուռ կը դնէր,
Ես կը մեռնեմ է՛ն եարին
Փափախը ծուռ կը դնէր։

513 Մեր գետը վարարել ա,
Սիրտը հետը տարել ա,
Ինձ պէս ջոմար ա 3) աղջիկը
Ծաղկի պէս սալարել ա 4)։

514 Ա՛յ կիշեր տարի դառի՛,
Կերբս թող ըլնի գարի,
Մինակ եարբս ինձ համար
Սրտով կայնի իրխարի 5)։

515 Քաղցր լեզուդ պալի պալ է,
Թուխ աչքերդ զաշ ու լալ է,
Տեսնողն կ'լնի բոյիդ հէյրան
Մէկ չինարի սալվի տալ է։

516 Կաքաւ եմ քարա միջում,
Կը կարդամ ձորամիջում,
Ատուած իմ մուրազբս տուր
Էս գալող շաբթու միջում։

517 Արազի ափի զաղը,
Ասում եմ մուխամբազը,
Ինձի սիրի՛ աղչիկ ջան,
Ինձ այրեց քո էշխ-նազը։

518 Եարբս գեղի խարազ ա,
Աղլուխս տուի թաւազա,
Մինն էլ որ իմ կուշտը գայ
Գաթա կ'ուտեցնեմ թազայ։

519 Գութանը հոլա հոլա,
Գութան քաշողը տոլ 6) ա,
Տոլ ես տոլութիւնդ արա՛
Քո խօսքին նայող չկայ։

520 Կողբայ բերեցին աղը,
Սրտիս քաշեցին դաղը,
Քեզ հետ էնքան չե՛մ խօսայ
Բարով ըլլենք հայլաղը։

---

1) Ծաղրի առարկայ. — 2) Ետ քաշուել. — 3) Գեղեցիկ. — 4) Նիհարել, թառամել. — 5) Խոստովանութիւն. — 6) Դատարկաշրջիկ։

521 Քեռանվան ձին գոմում կապած,
Սիրտըդ սրտիս է կպած,
Տանու դուշման մարդիկը
Ինձ ու քեզ լաւ են խաբած։

522 Մաղերըդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա,
Երեք օր է չեմ տեսել
Իմ սիրտս մոլորել ա։

523 Հաց եմ թխել պարի ա,
Իմ եարը սափարի 1) ա,
Եար ջա՛ն սափարիդ ղուրբան
Խօսքերըդ չափարի ա։

524 Մի թռչուն սեւ թեւերով,
Երգեց պէս պէս ձեւերով,
Ասաւ խելօք մարդ քիչ կայ
Աշխարհ լի է խեւերով։

525 Տեղ եմ քցել փոթ կը տայ,
Բարձ եմ դրել սոթ կը տայ,
Մեռնիմ միջի քնողին
Անուշ խնկահոտ կըգայ։

526 Կարմիր վարդիս վար չ'ունեմ,
Չ'իմանաս թէ եար չ'ունեմ,
Գիտես թէ ես մենակ եմ
Մակեար սիրելի չ'ունեմ։

527 Երկինքէն անցաւ դուռնէն,
Բրդի չինած կուլէն,
Աղջի չատ մի՛ խօսի
Բերանը կծի թուլէն 2)։

528 Սարէն կըգայ սառը ջուր,
Տղայ արի՛ տար քու քուր,
Քու քուրն ինձի հաւան չէ,
Տար ինձանից լաւին տուր։

529 Ուռի ծառը կանանչ է,
Զարդ ու բարիդ ճանաչէ,
Գող մարդկանցից հեռացի՛ր,
Որ խիղճըդ քեզ չը տանջէ։

530 Ա՛յ տղայ հաղար 3) ըլնես,
Իմ աղբօր սաղար 4) ըլնես,
Թէ ինձանից ջոկ եար բռնես
Դու սրտապատառ ըլնես։

531 Ցուշիկ քեզայ վըր պաղին 5),
Ջընկնի կոտրի սըչբաղին 6),
Սըչբաղու ձէնն անուշ ա,
Սարի թփիկ նմուշ ա։

532 Հէրըս գիրըմ գրեր է,
Բաղըմ ունիմ փըլեր է,
Մըր բաղի մեջ ալ ղուշը
Իմ գրգումը քներ է։

533 Գընա՛, գընա՛ քու հետ գամ,
Խըտա քու ղուշի ձէնին գամ,
Փառջիկ յըլնամ ու քեռամ
Պագիկն առնեմ ու հետ գամ։

534 Ժամի ղըռան սեւ քարը,
Բա մո՞նց կըլլի իմ ճարը,
Սիրտըս դարդով լցուեր ա
Չեռէս թռաւ իմ եարը։

535 Կաքաւ թռում քարերուն,
Ցեղնայ իջնայ դարերուն,
Հարսներ կանչում վըր ջիուն
Պագիմ ճակատ ղըրկիմ տուն։

536 Մեռայ բաղը գընալէն,
Ջրերի հետ խաղալէն,
Ծառներին թուփ չը մընաց
Դարտիս դարման անել էն։

537 Անձրեւ եկաւ շաղալէն,
Ուռու տերեւ գողալէն,
Հըրէս էկաւ իմ եարը
Ալ ձին տակին խաղալէն։

538 Ախչի՛ նստել ես բրջին 7),
Կը գործես խալի խուրջին,
Ախչի՛ քու ծամը կտրի
Խարարդ է հասել գիւրջին 8)։

---

1) Հերթ։ — 2) Շան ձագ։ — 3) Զգոյշ։ — 4) Օգնող։ — 5) Սառոյց։ 6) Ծամթել։ — 7) Աշտարակ։ — 8) Վրացի։

539 Սարի թրթնջուկ թաղա,
Մեղը ու չաքար քեզ մաղա 1),
Ի՛նձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս աղին ո՞նց սազայ։

540 Դրրանս փակ չեմակալ,
Ինձոր քցեմ արի կա՛լ,
Քրքոջդ եարի հետը
Ինձ չինել ես քենակալ։

541 Աչքս քցել եմ սարին,
Ոտքս տուել եմ քարին,
Աստուածնէրդ օր սիրէ՛ք
Բան մի ըսէք իմ եարին։

542 Էլանք սարերը մօտիկ,
Ջունը էկել է գօտիկ,
Ախչի՛, դու ի՞նչ խօրօտիկ,
Արի՛ մեր դրան մօտիկ։

543 Գիրըմ գրա՛՝ հարց ըրա՛,
Մինն էլ գրա՛՝ դարձըրա՛,
Թէ որ քեզ աղջիկ չեն տայ
Ղայրաթ 2) արա՛՝ փախցրա՛։

544 Էս առուն ջուր ա էթում,
Մէ տեսէ՛ք ուր ա էթում,
Մըհանայ 3) քեն ին անըմ
Եարը տեղնալու ա էթըմ։

545 Ծառի միջին կանանչ էր,
Աղջիկն ընձի կը կանչէր,
Ձէն մի՛ հանա մարդիկ կան,
Աղջիկ հօրից կ՚ամանչէր։

546 Սարից գալիս ա քամի,
Դու չես մընում մի համի,
Ամեն ածող չ՚ածողի
Մի՛ թողնի միտս ծամի։

547 Ջաղացս կանի խաւար,
Դուշման քու աչքը խաւար,
Սիրել ենք իրար կ՚առնենք
Թո՛ղ տանեն եօթը տաւար։

548 Մտի՛կ արէք էն ղշին,
Ոտը դրել ա փշին,
Գլուխըս զուրպան կը տամ
Զալ աչքին, կարմիր թշին։

549 Ձեռդ 'ի զարկիր մըջ էղին,
Քուն չը տանայ մըջ տեղին,
Օր էն մէկ ոսկի խարճեմ 4)
Երեսդ քսա՛ իմ պէղին։

550 Վըրըր-վըրըր վըրաւոր,
Տէր խօր միրուք փըռաւոր,
Ամ՛ խաքի նոր չուխայ
Ինձի կըլլես դու քաւոր։

551 Ջադր 5) եմ տուել սարին,
Վադայ եմ կարե տարին,
Վադայ կտրած տարին տես
Էդ իէիլդար եարին տես։

552 Ձեռիդ փունջ կայ անթառա՛մ,
Մի՛նն էլ ես տամ անթառամ,
Ես-դու իրար հետ ապրինք
Մինչ տանքեազդար անթառամ։

553 Մեր տան ետնէն բախչայ կայ,
Բախչի միջին ռեհան կայ,
Ռեհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պտի։

554 Գէղէն ձորէն սայրուպար,
Աչքերդ մէյ մէ քեահրիպար 6),
Սիրտս ընկաւ սրտէդ քար,
Դու ինձ եղար հոգեառ։

555 Հանդում բուռնել ա սոկոն 7),
Մէրըդ թխել ա բոքոն,
Մեռնիմ ծոցիդ նռներին
Գըլմանի վարդի կոկոն։

556 Ամբէ՛ր հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ գանակիդ մեռնեմ,
Ճամբայ էրթող չէկ ախբէր
Դուքեան-բազարիդ մեռնեմ։

---

1) Մրգեղէն. — 2) Ջանք. — 3) Պատճառ. — 4) Ծախսել. — 5) Վըրան. — 6) — Սաթ. — 7) Սունկ։

557 Հանդը քաղհան ես գընում,
Հետըդ ուրիշն ես տանում,
Իմ դարտիցը խաբար չես
Ընձի սաղ-սաղ ես ապանում։

558 Սրուիդ արասին ղուրպան,
Գինուդ կարասին ղուրպան,
Ճամբից գալող չէկ աղբէր
Սրտիդ հաւասին ղուրպան։

559 Եարալու-եարալու սիրա,
Ո՞ւր ա մարալու սիրաը,
Շուտ մուրազիդ կու հասնիս
Մի՛ լար իմ բալալու 1) սիրա։

560 Ա՛յ տղայ սեւ չուխաւոր,
Սաղմոս ծոցիդ սաւոր,
Էրնակ կըտամ էն օրը,
Մեր տունը գաս թագաւոր։

561 Լուսադէմին քուն կուգայ,
Կէս գիշերին տուն կուգայ,
Էրուած ու վառած եարին
Սրտիցը արիւն կըգայ։

562 Աղբէ՛ր բաղդ անուշ է,
Բաղիդ միջինը նուշ է,
Աղբէր խաթրըդ չը մընայ
Եարըս քեզնէն անուշ է։

563 Բախչա ունիմ ծառներով,
Մէջը լիքն ա գառներով,
Գառներ մատաղ կարէի
Անուշ եարիս ձեռներով։

564 Ծառի տակին ատայ էր,
Եարոջ տեսնալ զատայ 2) էր,
Շատ մի՛ ուռի կը պատրիս
Էդ քու սիրա՛ծն կեսդա էր։

565 Ա՛յ տղայ բաղոջն արի՛,
Ոտներդ չաղոջն արի՛,
Էս թաղը զալմաղալ ա
Մանտու է՛ն թաղոջն արի՛։

566 Բեռներով կազ 3) եմ բերել,
Քեզ ոսկէ մազ եմ բերել,
Հինդու անգին քարերից
Գլխիդ փարուազ 4) եմ բերել։

567 Արաս ցորեն ցանեցի,
Դարդըս հետը թաղեցի,
Հազար ու մի աղօթքներ
Ցանած վախտը շարեցի։

568 Հաղո՛ղ, ծառդ անիծած,
Ունիս շատ տներ քանդած,
Ով քո ջըրից հեռանայ
Ջիբը կը մնայ փակուած։

569 Ա՛յ տղայ բաղի միջին,
Ոտներդ չաղի միջին,
Կանչի կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քու հաղի միջին։

570 Աչքըս քցել եմ սարին,
Ոսրս գիպաւ լեռ քարին,
Էրթայ ու էլ ետ չըգայ
Քեզ սալդաթ գըրած տարին,

571 Մարդ եմ ղրկել առաւօտ,
Որ դու չուտ գաս ինձ մօտ,
Ասուած անէ քու դիւան,
Կուզես քցես ինձ քու ոտ։

572 Նախըր դոնէն ուռի ծառ,
Խնձոր թալեմ 5) արի՛ տար,
Խնձորի կէս խածուկ էր,
Եարոջ գոտին դրած էր։

573 Կովի հորթը կապեցիր,
Նատար տանը կթեցիր,
Կաթն ու կարագը մեղրած
Եարիս փէշքէշ 6) ղրկեցիր։

574 Աշխարքի մէջ մարալ ես,
Էշխովդ հոգիս հանալ ես,
Թէ ընձի թայ 7) չը մընաս
Ալամ գիտէ խաբել ես։

---

1) Ողորմելի։ — 2) Սրգելուած։ — 3) ա. Մետաքս։ բ. մի տեսակ շաքարեղէն բուսեղէնով պատրաստած։ — 4) Գլխի զարդ ակներով։ — 5) Քցել։ — 6) Նուէր։ — 7) Ընկեր։

575 Սոխակ կ'երգէ օր 'ի բուն,
Օրօր կասէ վարդերուն,
Սոխա՛կ Աստուծու խաթրու
Ինձ էլ շուտ բեր անուշ քուն։

576 Ժամ չինի կամար-կամար,
Սաւտա եմ քըզի համար,
Աղչի՛ Աստուածդ սիրես
Փէ պահա՛ ընձի համար։

577 Գեղին էն քով Ս. Սարգիս,
Եար ջան արի Ս. Սարգիս,
Բարեկենդանին չը գաս
Էրկուշաբթի օր սատկիս։

578 Գանգատ ելայ մեր ռէսին 1),
Ռէսին էն սեւ էրեսին,
Աբզայ 2) տուի որ թողայ
Տուխաղ արած մեր փէսին։

579 Աբեւը մէր է – մէր ա,
Օչխարը, գառն անտէր ա,
Մէրաւորը մէրն ընկաւ.
Անմէրը ընչի տէր ա։

580 Օրը մէջ մէկ կիրակի,
Օրը մէջ դու տրաքի,
Օրը մէջ գլուխըդ մեռնի,
Որ քցեցիր մէջ կըրակի։

581 Վարդ ես քցել քու ուսին,
Առաւօտ արշալուսին,
Քու մէրը քեզ բռնել ա,
Արժան չի անում լուսին։

582 Դռան տակին թաք կացայ
Երբոր գալըդ իմացայ,
Ոտներս սեւ ջուր իջաւ
Ա՛խ, մէկ ձէնըդ չ'իմացայ։

583 Սիրտս լցուել ա կըրակ,
Ինձ ազատէ՛ք թէ կարաք
Թէ չէ էգուց կը մեռնիմ
Ես անխանչալ-անդանակ։

584 Աբազը հեշատցել ա,
Ճամբէքը կոչատցել ա,
Խաբար տարէ՛ք իմ նանին
Մուշտարիս 3) շատացել ա։

585 Տօ՛, ինչ զալո՛ւմ կ'երգես,
Էդ ո՞ր քաժին կը խափես,
Քօչըդ արա՛ 4), հեռո՛ւ կաց,
Աղիքներըդ չը թափես։

586 Սարի գլխունը ես եմ,
Զկներու կէսը ես եմ,
Քընող քրտնող եարոջ
Գիշերուան ընկերն ես եմ։

587 Քալէ՛, գնա՛ տունվար 'իվար,
Բուլքիդ պահէ քեզ համար,
Սեւ երես ու սեւ միրուք
Ընձի չի դայ բարեբար։

588 Լուսնեակը էրթկով անցաւ,
Թըմբկի ետեւ անց կացաւ,
Մեր եայլի սիրուն աղջիկն
Ինձի ինչի՞ թէզ մոռցաւ։

589 Նխշուն ա նխշուն զուշը,
Կարմիր ա եարիս թուշը,
Վա՛յ ջուրըն գայ ինձ տանի
Որ ծակել ա փուշը։

590 Միրուքըդ ածիլել ես,
Թշերըդ կարմըրցել ես,
Չի ըլնի որ մօտիկ գաս
Ու իմ հալից հարցընե՞ս։

591 Թաւէն ծակ է եղ չ'կայ
Փեսէն էկաւ տեղ չը կայ,
Փեսին շատ էրես մի՛ք տալ
Փեսին էյթիպար չը կայ։

592 Զուն կուգայ փաթիլ-փաթիլ,
Փառամ ա մեր ղարաֆիլ,
Սիրածին որ չը տեսնեմ
Աբուն կերթայ դի՛փ կաթիլ։

---

1) Տանուտէր։ — 2) Խնդրագիր։ — 3) Գնող։ — 4) Բանըդ տե՛ս։

593 Թռի՛, թռի՛, թռցուցեմ,
Սեւ հաւու մէս կերցուցեմ,
Կարմիր գինի խմցուցեմ
Ծառի հովին քնցուցեմ։

594 Նանի՛, նանի վա՛յ նանի՛,
Նանի՛, քունըդ ո՞նց տանի,
Էսա կը տանեն ընձի,
Վա՛յ խեղճ նանիս ի՞նչ անի։

595 Եարս թուխ թաղ ես արած,
Արունըս թողել սառած,
Գէլն ուտի քո էշ գլուխը
Փողով քեօխվա ես դառած։

596 Ես եմ գալիս կալիցը,
Պաչեմ ճակտիդ խալիցը,
Ի՞նչ կըլնի որ մի տեսնես՝
Հասկանաս իմ հալիցը։

597 Արտեր ցանեն կորընկան,
Եարս ի եկաւ վըր ծնկան
Աչքեր թալեց իմ յէրես
Իմ մէրը մնաց սեւերես։

598 Օսկի, մարջան ի՞նչ անեմ,
Սարդարի քօշքն ի՞նչ անեմ,
Մէ իմ եարիս ինձ տուէք
Էլ ղզըլբաշն ի՞նչ կ'անեմ։

599 Կայնել ես մէջի միջին,
Զինարի ծառոց միջին,
Քեանուլդ կեր կըրցնես
Ալ վարդի փնջի միջին։

600 Համբարձումին մանանք պար,
Ես քեզ դու ինձ ասանք եար,
Ես ջա՛ն ասեմ դու գիւլում
Ուրախանանք միալար։

—

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

12 Հայոց գիւղերում փեսային թագաւոր են ասում։

33 Առհասարակ Մշոյ Ս. Կարապետ են ակնարկում, որովհետեւ ժողովրդի մէջ այն կարծիք կայ թէ նա ամենքի խնդիրը կատարում է։

44 Աշտարակ մեծ գիւղ է Ս. Էջմիածնից 18 վ. հեռու, հայրենիք Ներսէս Ե. Կաթ.-ի, Պ. Պռոշեանի եւ Ս. Շահազիզի։ Բնակիչները շատ ճարտար լեզու են եւ ոտանաւորով հայհոյել գիտեն։

45 Արազ կամ Արաքս կամ Երասխ մայր գետ Հայաստանի, որ Կուրի հետ միանալով թափւում է Կասպից ծովը։

63 Հայոց մէջ սովորութիւն կայ երբ հիւր է գալիս մերթ հարսը մերթ ջահէլ աղջիկն է մօտենում ոտնամանները հանում եւ նոյն իսկ ոտները լուանում։

76 Բաշ-Շորագեալ գիւղ Ալէքսանդրապօլ քաղաքի մօտ։

81 Չորս տարի գինուորութեան ժամանակամիջոց։

28 Քանաքեռ գիւղ Երեւանից 7 վ. հեռու, հայրենիք անմահ Խաչատուր Աբովեանի։

95 «Տարան-Տարան»։ Երեւանի կողմեր երբ հարսին հօր տնից տանում են, լաց ու կոծ է բարձրանում իսկ զուռնան մի տխուր եղանակ է ածում, որ այդպէս է կոչւում։

103 Ղօշիվանքի ղշեր գտնւում են Անի քաղաքից մօտ 5 վ. հեռու։ Սա յաղթական կամար է, որ այժմ աւերակ է։ Այդպէս է կոչւում եւ մօտի վանքը, որտեղ թաղուած է Աշոտ Գ. Ողորմած թագաւորը, որի տապանաքարի վրայ գրած է «Աշոտ թագաւոր Հայոց»։ Այստեղ կայ նաեւ հանքային աղբիւր։

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ՀՍՍՀ ԱԿԱԴ.ՍՍՌ

123 Մողնի Ս. Գեորգ եւ Հանանավանք (Ս. Յովհաննու վանք)։ երկու վանքերն էլ բաւական հին են եւ գտնւում են միմեանց մօտիկ Ս. Էջմիածնից ոչ հեռու։ Հաննավանքը շինուած է ժայռերի վրայ։ Շատ հնութիւններ կան երկու վանքերումն էլ։

158 Բուշաւուրխ գիւղ։

172 Ղապահան-Իսպահան, քաղաք հարաւային Պարսկաստանի։ հին մայրաքաղաք։ Այս քաղաքի մօտն է շինած Շահ-Աբասի քշած գաղթականների Նոր-Ջուղա քաղաքը։

193 Ուշի. Օշական, Բիւրական գիւղեր Ս. Էջմիածնի մօտ։ Օշականումն է թաղած հայ նախարար նշանաւոր Վահան Ամատունին, իսկ եկեղեցու մէջն էլ հայոց գրեր հնարող Ս. Մեսրոպ Մաշտոցը։ Բիւրականը Հայոց կաթուղիկոսների ամառանոց է։

206 Յայսանաւուրք գիրք. որտեղ գրուած է բոլոր սրբերի կենսագրութիւնները։ Հին ժամանակ կարդում էին եկեղեցում երեկոյեան ժամերգութիւնից յետոյ։

230 Կարբի գիւղ Ս. Էջմիածնի մօտ, բնակիչները շատ ճարտար։

252 Դեւանջա - Գանձակ կամ Ելիսաւետպոլ քաղաք։

266 Կեորիս - Գորիս գիւղաքաղաք Շուշուց 50-60 վ. հեռու։

338 Գեորգ ղուշ. Ս. Էջմիածնի կողմեր մի տեսակ թռչուն կայ, որ 'ի պատիւ Գէորգ Դ. Կաթուղիկոսի այդպէս է կոչւում։

346 Կողբ. մեծ գիւղ Երեւանից մօտ 40 վ հեռու, նշանաւոր է աղահանքով. այդտեղացի էր Ե. դարու նշանաւոր մատենագիր Եղնիկ Կողբացին։

353 Աղագեազ կամ Աբագած լեռ Ս. Էջմիածնի մօտ։

358 Սանքոլ-Կ. Պոլիս, Տաճկաստանի մայրաքաղաք։

394 Աղուես դար. Կողբի մօտ քլուբ է։

401 Կարմիր վանք. Ալէքսանդրապոլի մօտ վանք եւ գիւղ. եկեղեցին շինած է կարմիր քարից, որի համար եւ այդպէս է կոչւում։

403 Կարծախ գիւղ Հայոց Ախալքալաքի գաւառում։

440 Ղուրուշ. տաճկական դրամ, արժէ մօտ 7-8 կոպէկ։

504 Վարդ Վարդան- Կարմիրն Վարդան, 451 թ. առաջին կրօնական պատերազմի քաջ զօրավարը։

520 Եայլաղ ըլլէլ կամ գնալ. գիւղացիք շատ տեղերում ամառուայ շոգից ազատուելու համար հով տարեր են քարձրանում, որ նրանց ամառանոցն է, իսկ առհասարակ անասուններին տանելն է կոչւում այդպէս։

557 Քաղիան ալեղ. ցանած տեղից աւելորդ խոտեր դուրս պոկել։

566 Հինդ = Հնդկաստան։

598 Սարդարի ֆօշկ գտնւում է Երեւանում, դա մնացել է պարսկական տիրապետութիւնից, մէջը զարդարուած է պատկերներով, Շինուած է մի ձորի ափին։ Դա պարսիկ սարդարների-կուսակալների պալատն էր եւ այսօր էլ կայ։

18396

2013